

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

**ՓՐՕՖ. ԳԵՈՐԳ
ԽՐԼՈՊԵԱՆԻ
ԱՆԴԱՐՄԱՆԵԼԻ
ԿՈՐՈՒՍՏԻ
ՏԱՐԵԼԻՑԻՆ ԱՌԹԻ**

ՏՕՔՓ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Թուական էս տարի մր առաջ, 30 Յունուար 2010-ին, հողին յանձնեցին, «Մասիս» շաբաթաթերթիս մնայուն աշխատակից եւ խմբագրական կազմիս երբեմնի գործօն անդամ, բարեհամբոյր գործակից, Փրոֆ. Գեորգ Խրլոպեանը:

Անոր անժամանակ մահը խոր սուգի մատնեց ոչ միայն իր ընտանեկան պարագաները, այլ նաեւ՝ իր գրչի, մտքի ու հայ մշակոյթի բազմաուրուտ գրչակից, գրող, գրախնայող, արուեստաբան, քաղաքական մեկնաբան եւ գիտաշխատող մտաւորականութիւնը, նոյնպէս եւ՝ հեւ ի հեւ իր յօդուածներուն սպասող ընթերցասէր հասարակութիւնը:

Հայ գիտաշխատող միտքը, արդարեւ, կը կորսնցնէր իր առաջատար լաւագոյն առաջնորդներէն մին, որ իր մահով ետին ձգած կորստաբեր բացը, կարելի պիտի չի դառնար լեցնել: Բացը պիտի մնար բաց, ինչպէս կը պատահէր միշտ: Գացողին տեղը եկող չկար: Այս էր ցար մեր Սփիւռքի...

Հայկազեան գոյնէն ներս Հայագիտական ամսագրի հիմնադիր իր հօր, հայագետ Տիգրան Խրլոպեանի հայագիտական, հոգեւոր, մշակութային եւ հայրենասիրական տան հնոցէն ժառանգած ուժեղ հոգեմտաւոր դաստիարակութիւնը, իր արժանաւոր որդին՝ Փրոֆ. Գեորգ Խրլոպեան, դարձուց իր կեանքի առաջնութեան նշանաբանը: Իր գոյութեան ու առաջնութեան իմացական ներշնչարանը: Զինքն գօտեպնդող, ներշնչող ու առաջնորդող սկզբունքներ, գործունէութեամբ պաշտպանեց մինչեւ իր կեանքին արարտը:

Անգամ իր կեանքի վերջին օրերուն, ֆիզիկապէս խոնջած, պարտասած, ուժասպառ՝ ան, կանգնած մնաց հայու ֆիզիկական գոյութեան պաշտպանութեան, պատմական իրաւունքներուն ձեռքբերման առողջ պայքարի պատմէջի վրայ, միշտ հաւատալով հայ ժողովուրդի յաղթական լինելիութեան:

Իր բնատուր առաջնութիւնը կարեւոր յաջողութեամբ պսակելու համար, դեռեւս ուսանող, Գեորգ Խրլոպեան չի բարարուեցաւ երեսնամի Գեորգեանի Համալսարանէն ստացած Հայոց Լեզուի, Հոգեբանութեան եւ Տրամաբանութեան վկայականներով: Ան չի բարարուեցաւ, Հայ Փիլիսոփայութեան Պատմութեան, եւ Հայ Աստուածաբանութեան Պատմութեան մէջ տոբոբական բարձրագոյն

Շաբ.ը էջ 18

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԻՐԱՒԱՆՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ ԴԱՐՁԵԱԼ ԿԸ ՔՆՆԱԴԱՏԷ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

Մարդկային իրաւանց Հսկիչ (Human Rights Watch) իրաւապաշտպան կազմակերպութիւնը իր տարեկան գեկոյցին մէջ դարձեալ քննադատած է Հայաստանի իշխանութիւններուն՝ Մարտի 1-ի սպանդի կապակցութեամբ պատշաճ քննութիւն չկատարելու, ոստիկանութեան կողմէ թոյլ տրուող բռնարարներու եւ ընդդիմութեան հաւաքներու ազատութիւնը խոչընդոտելու պատճառաւ:

Միջազգային կազմակերպութեան կարծիքով, 2010-ի ընթացքին արձանագրուած այս խախտումներու հիման վրայ Հայաստանի միջազգային գործընկերները ամբողջութեամբ չեն օգտագործած իրենց կարելիութիւնները՝ մարդու իրաւունքներու ապահովման տեսանկիւնէն՝ Հայաստանի վրայ ազդելու համար:

«Իշխանութիւնը, նախկինի նման, իսկական հետաքննութիւն չկատարեցին, յայտնաբերելու համար 2008 թուականի Մարտի 1-ի դէպքերու ժամանակ ընդդիմութեան ներկայացուցիչներու դէմ ոչ համարժէք ուժ գործադրողները: Ուժի կիրառման համար ընդամէնը 4 ոստիկան դատապարտուեցաւ, որոնք համաներմամբ անմիջապէս ազատ արձակուեցան», - կը յայտարարէ «Human Rights Watch» հեղինակաւոր կազմակերպութիւնը, Երկուշաբթի, Յունուար 24-ին հրա-



պարակած իր գեկոյցին մէջ, ուր կը չիշուին նաեւ Մարտի 1-ի իրադարձութիւններէն յետոյ բանտարկուած ընդդիմադիր գործիչները, որոնք տակաւին անազատութեան մէջ կը մնան:

Կազմակերպութեան գնահատմամբ, Հայաստանէն ներս կը շարունակէ լուրջ խնդիր մնալ ոստիկանութեան կողմէ իրականացուող կոտորածներն ու դաժան վերաբերմունքը:

Մանրամասն անդրադարձ կայ նախորդ տարուայ Ապրիլին Չարենցաւանի ոստիկանութեան մօտ վահան խալաֆեանի մահուան դէպքին: Չեկոյցի հեղինակները կը յայտնեն որ, կայ պաշտօնական վարկած, թէ երիտասարդ ինքնասպան եղած է, սակայն անոր հարազատները եւ շարք մը իրաւապաշտպաններ համոզուած են, որ խալաֆեանին ոստիկանութեան մօտ

Շաբ.ը էջ 4

ՓԱՍՏՏԻՆԱՅԻ ԲԱՂԱՔԱՊԵՏԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՀԱՅ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԿԸ ԶՕՐԱԿՑԻ ԽԱԶԻԿ ՇԱՅԻՆԵԱՆԻՆ

Մարտ 5-ին տեղի ունենալիք Փաստօրինայի քաղաքապետական ընտրութիւններուն առթիւ Հայ Ամերիկեան Խորհուրդը (ՀԱԽ) իր գորակցութիւնը յայտնեց Քաղաքային Խորհուրդի անդամութեան թեկնածու՝ Խաչիկ «Քրիս» Շահինեանին, որ կը ձգտի գրաւելու քաղաքի 4-րդ ընտրաշրջանի աթոռը:

ՀԱԽ նաեւ իր գորակցութիւնը յայտնեց Փաստօրինայի ներկայիս քաղաքապետ Պիլ Պոկարտին եւ քաղաքային Խորհուրդի անդամ Մարկարէթ ՄաքՕսթընին:

Այս առթիւ հրապարակուած հաղորդագրութեամբ ՀԱԽ կը տեղեկացնէ, որ ուսումնասիրելէ ետք երեք թեկնածուներու ծրագիրները, եզրակացուցած է որ, անոնք կրնան լաւագոյնս ծառայել քաղաքի տարբեր համայնքները ներկայացնող բնակչութեան եւ նուիրուած են Ամերիկահայութիւնը յուզող հարցերուն:


«Անցեալին մենք ունեցած ենք եւ պիտի շարունակենք ունենալ կարծիքներու լայն փոխանակութիւն քաղաքապետ Պոկարտի եւ Քաղաքային Խորհուրդի անդամ ՄաքՕսթընի հետ, որու արդիւնքը



եղած է դրական ընդհանուր քաղաքին համար ու յատկապէս նաեւ՝ Ամերիկահայ բնակիչներուն», - ըսաւ ՀԱԽ-ի Փաստօրինայի մասնաճիւղի վարչութեան անդամ Յակոբ Աճէմեան: Ան նաեւ յոյս յայտնեց, որ նոր դէմք ըլլալով, մեր ազգակից Պր. Շահինեան պիտի կարողանայ նոր եռանդ մտցնելու Քաղաքային Խորհուրդէն ներս:

Փաստօրինայի 2-րդ եւ 4-րդ ընտրաշրջաններէն ներս կը բնակին մեծ թիւով հայեր:

«ՅԵՂՊԱԼԼԱՅԻ» ԹԵԿՆԱԾՈՒՆ ՆՇԱՆԱԿՈՒԵՑԱԻ ԼԻԲԱՆԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏ



Լիբանանի նախագահ Միշէլ Սուլէյման Երեքշաբթի, Յունուար 25-ին վարչապետի պաշտօնին նշանակեց Իրանի համակիր «Հրգպալ-լաճ» (Հայերէնով կը նշանակէ Աստուծոյ կուսակցութիւն) կազմակերպութեան թեկնածու Նաճիպ Միքաթիին:

Լիբանանի պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով Շիա մահմետականներու զինեալ շարժումը գլխաւոր դերակատարութիւն պիտի ունենայ կառավարութեան կազմութեան մէջ:

Երկրի նախագահի մօտ կատարուած քուէարկութեան ընթացքին, Խորհրդարանի անդամներու մեծամասնութիւնը քուէարկած է Միքաթիի կողքին, որ ստացած է

Շաբ.ը էջ 4

ՇԱՐԼ ԱԶՆԱԻՈՒՐ ՊԱՏՐԱՍՏ Է ԿԵԱՆՔԻ ԳՆՈՎ ԴԻՍԱԴՐԵԼ ՍԱՐՔՈՋԻՆ

Աշխարհահռչակ ֆրանսահայ երգիչ Շարլ Ազնաւուր պատրաստ է վտանգել իր կեանքը եւ առճակատման մէջ մտնել Նիքոլա Սարքոզիի հետ, եթէ նախագահը չի կատարէ ֆրանսահայերուն տուած իր նախընտրական խոստումները:

Le Dauphine' Libe're' պարբերականին տուած իր հարցազրոյցին մէջ Ազնաւուր լուրջ անհանգստութիւն արտայայտած է Ֆրանսայի մէջ հայկական հարցին շուրջ տիրող իրավիճակի մասին:

«Նախագահ Սարքոզին որոշակիօրէն ուրացած է ընտրութիւններու ժամանակ տուած խոստումները: Ան ճիշդ չէ, քանի որ ֆրանսահայ համայնքը՝ թրջական համայնքի համեմատ աւելի մեծ թիւ մը կը ներկայացնէ: Հայ

Շաբ.ը էջ 5

ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ, ԼԵՋՈՒ, ՊԵՏՈՒԹԻՒՆ

ՅԱԿՈՐԲԱԴԱԼԵԱՆ

Վրաստանի նախագահ Միխայիլ Սահակաշվիլիի հայաստանեան այցն անցաւ առանց մեծ աղմուկի: Դրա պատճառը գուցէ այն էր, որ այցը տեղի ունեցաւ հանգստեան օրերին, երբ թէ հանրութիւնը, թէ մեդիամիջավայրը գտնուում են ոչ աշխատանքային ռեժիմում: Զի բացառուում, որ հենց աւելորդ աղմուկից խուսափելու համար էլ այցը կազմակերպուել էր հանգստեան օրերին: Դա թերեւս վկայում է այն մասին, որ երկու նախագահները՝ Սարգսեանն ու Սահակաշվիլին, այցը գերադասել են օգտագործել արդիւնաւէտ քննարկումների, քան քարոզչութեան համար: Առանց քարոզչութեան իհարկէ չի լինում ոչինչ, բայց որ այս անգամ այն զգալիօրէն նուազ էր, թերեւս ակնյայտ է:

Կար նաեւ մէկ այլ առանձնաչափութիւն: Սահակաշվիլիի հայաստանեան այցի ընթացքում գերադասուեց հրապարակային առումով շատ չխօսել քաղաքականութիւնից: Հիմնական շեշտը տնտեսութիւնն էր, յատկապէս տեղեկատուական տեխնոլոգիաների ոլորտը: Երկու նախագահները հենց այդ ոլորտին առնչուող հայ-վրացական աշակերտական օլիմպիադայի մասնակիցների պարգե-

ղային հանրապետութիւններ, որտեղ մեր աչքի առաջ այդ խնդիրը լուծուեց: Իհարկէ ոչ ամբողջութեամբ, բայց կաշտակերութիւնն ու կոոռուպցիան հասցուեցին այնպիսի նուազագոյնի, որ ժողովուրդը սկսեց հաւատալ պետական չինովնիկներին, ոստիկաններին ու դատաւորներին», յայտարարեց Սերժ Սարգսեանը 2010 թուականի դեկտեմբերի 18-ին ՀՀ 20-ամեակի միջոցառմանն ունեցած ելոյթում: Նա Վրաստանի անունը չի տալիս, սակայն ակնյայտ է, որ այդ նկարագրութիւնը վերաբերում է հենց Վրաստանին, քանի որ յետխորհրդային երկրներից հենց Վրաստանում է, որ «մեր աչքի առաջ» է լուծուել այդ խնդիրը, ու յետխորհրդային երկրներից թերեւս հենց միայն Վրաստանում է, որ այդ խնդիրը լուծուել է (կան իհարկէ մերձբալթեան երկրները, բայց այնտեղ այդպիսի խնդիր ըստ էութեան չի էլ եղել անգամ խորհրդային տարիներին):

Իհարկէ կասկած չկայ, որ Հայաստանի իշխանութեան համար Վրաստանի պարագան առաջիմ ունի գուտ քարոզչական նշանակութիւն: Աւելին, պէտք է բացառել, որ որոշակի քաղաքական կոնիւնկտուրայի դէպքում այդ երկիրը կարող է ոչ թէ որպէս յաջող ռեֆորմների օրինակ յիշատակուել,

Վրաստանը խօսում է անգլերէն, Հայաստանն էլ ռուսերէն է խօսում: Դա արդէն իսկ բաւական խօսուն կերպով արտացոլում է քաղաքական իրավիճակը

լատրման արարողութեանը մասնակցեցին, ելոյթներ ունեցան, միմեանց բարեկամ անուանեցին, իսկ Սահակաշվիլին էլ Հայերին խորհուրդ տուեց խօսել անգլերէն՝ Վրաստանի օրինակով:

Սահակաշվիլիի այցի ընթացքում քաղաքականութեան այդ ընդգծուած չհրապարակայնացումը կարծես թէ յուշում է, որ իրականում հենց քաղաքականութիւնն է եղել այցի բուն նպատակը: Սովորաբար, այդօրինակ այցերի ընթացքում, հրապարակային մասերով փորձ է արւում սքողել բուն բովանդակութիւնը: Միւս կողմից, քաղաքականութիւնն ասուածն աշխարհում վաղուց արդէն դարձել է բաւական ընդգրկուն, առաձգական երեւոյթ: Եւ ասենք նոյն անգլերէնի հարցը նոյնպէս քաղաքականութիւն է:

Վրաստանը խօսում է անգլերէն, Հայաստանն էլ ռուսերէն է խօսում: Դա արդէն իսկ բաւական խօսուն կերպով արտացոլում է քաղաքական իրավիճակը: Նաեւ նկատելի է, որ Վրաստանն անգլերէն «խօսելուց» աւելի է շահում, քան Հայաստանը ռուսերէնից: Ինչ Վրաստանը սկսել է «խօսել» անգլերէն, այդ երկրում նկատելի բարեփոխումներ են իրականացւում: Իսկ ռուսերէնը Հայաստանում բարեփոխումները կարծես թէ աւելի ու աւելի խորն է թաղում:

Բայց հետաքրքրական միտում նկատելի է: Բանն այն է, որ Հայաստանի իշխանութիւնը սկսել է յիշատակել բարեփոխումների Վրաստանի օրինակը: «Այսօր մեր առաջընթացի թիւ մէկ խոչընդոտներն են կաշտակերութիւնն ու կոռուպցիան: Դրանց պատճառներն են նախորդակից մասին կարելի է ժամերով խօսել, բայց մեր խնդիրն այսօր դրանց այդ-թահարումն է: Կան նախկին խորհր-

այլ որպէս յեղափոխական զարգացումների աննպատակայարմարութեան օրինակ: Այդ իշխանութիւնների բովանդակութիւնը Հայաստանի քարոզչական պաշտօնամեքենայում պայմանաւորուած է նրանով, թէ տուեալ պահին ինչ ռեժիմում է գործում Հայաստանի իշխանութիւնը: Հիմա յայտարարուած է ռեֆորմիստական վարքագիծ, եւ Վրաստանը դարձել է դրական օրինակ: Ով գիտէ, թէ ինչ կը լինի վաղը, կամ ընտրութիւններից յետոյ:

Բայց, այդ ամենից դուրս, կայ իրականութիւն, որը պարտադրում է իրենը: Իսկ այդ իրականութիւնն այժմ այն է, որ Վրաստանը ռեֆորմիստական վարքագիծ գործնականութեան առումով զգալիօրէն առաջ է անցել թէ Հայաստանից, թէ Ադրբեյջանից: Եւ այդ գործում անկասկած զգալի նշանակութիւն ունի այն, թէ ինչ լեզուով է «խօսում» երկիրը: Շատերը գուցէ կ'ասեն, թէ ինչ տարբերութիւն՝ Հայաստանը ռուսերէնին է տրուում, Վրաստանն էլ միւս ծայրայեղութեան մէջ է՝ անգլերէնին է տրուում: Իհարկէ, առաջին հայեացքից որեւէ տարբերութիւն չկայ, եւ կարծես թէ գործ ունենք երկու ծայրայեղութիւնների հետ:

Բայց, տարբերութիւնն այն է, թէ որից է շահում պետութիւնը: Իսկ այդ առումով ակնյայտ է, որ Վրաստանը շահում է, իսկ Հայաստանում շահում է միայն իշխող համակարգը, որի համար ռուսերէնը դարձել է վերարտադրութեան կարեւոր գործօններից մէկը: Գուցէ Վրաստանի իշխանութեան համար էլ անգլերէնը ծառայում է որպէս վերարտադրութեան գործիք, բայց խնդիրն այն է, որ այս դէպքում ակնյայտօրէն վերարտադրուած է նաեւ պետութիւնը: Իսկ դա արդէն մեծ եւ էական տարբերութիւն է: «ԼՐԱԳԻՐ»

ՄՈՅԻԱԼԱԿԱՆ ԲՈՒՆՏ ԸՆԹԱՅՔԻ ՄԷ Է

ԳՐԻԳՈՐ ՈՍԿԱՆԵԱՆ

Ուրբաթ օրուանից Երեւանի գրեթէ բոլոր խանութներում հացը 10-20 դրամով թանկացել է: Այլուրն ու ձէթը նոյնպէս թանկացել են: Աւելին՝ «ոլորտի տնտեսվարողները» պնդում են, որ առաջիկայում թանկացումները շարունակուելու են, որովհետեւ միջազգային շուկայում ցորենի գներն աճել են: Զէ, իրենք այդ թանկ ցորենից դեռ չեն առել ու չեն բերել Հայաստան, դեռ էժան ցորենն են վաճառում, բայց դա կարելու չէ. հազիւ առիթ է՝ թանկացնում են: Դրան գուզահեռ՝ «փողոցային առետրով» զբաղողներն էլ քաղաքապետարանի առջեւ են բողոքի ցույցեր անում ու փորձում բացատրել, որ փողոցային առետրու արգելելու որոշումով մի քանի հազար ընտանիքներ գրկոււմ են մի կտոր հացից: Իզուր, ոստիկաններից բացի ոչ մէկը նրանց փաստարկները չի լսում:

Իսկ հաւ պատգամաւոր Վարդան Բոստանջեանը գտնում է, որ մտահոգուելու կարիք չկայ՝ Հայաստանում սոցիալական բռնատնտեսարար չէ, որովհետեւ «հայ ժողովուրդը բռնատ անել չի սիրում»: Վարդան Բոստանջեանն, ի դէպ, ոչ միայն իսկապէս մտահոգուած է ժողովրդի սոցիալական վիճակով, այլեւ Աժ պատգամաւորներից թերեւս ամենամեծընդուն է եւ տուեալ դէպքում ասում է այն, ինչ միւսները մտածում են, բայց չեն ասում:

Առաջին՝ արձանագրում է, որ իշխանութիւնները սոցիալական բռնատից վախենալու պատճառ չունեն, որովհետեւ հայերը բռնատ անող չեն. մենք ոչ զրոգներ ենք, ոչ թունդիսցիներ, ոչ ուսաներ: Ժիշդ է ասում: Հայերը նման դէպքերում որքան հնարաւոր է՝ դիմանում են, իսկ երբ դանակը ոսկորին է հասնում, պարզապէս հեռանում են երկրից: Հենց դա էլ տեղի է ունենում այսօր:

Երկրորդ՝ Ընդդիմութեանն ուղղուած նրա հեզնանքում նոյնպէս լուրջ մտահոգութիւն կայ. նա պարզապէս արձանագրում է, որ «թողնել-հեռանալու» կոչերը բացարձակապէս ոչինչ չարժեն, որովհետեւ ոչ ոք այդ կոչերը չի լսել, «բան ունէք անելու՝ արէք»: Եւ դարձեալ միանգամայն իրաւացի է: Երրորդ՝ մարդը բաց տեքստով ասում է, որ քաղաքապետը սխալ է արել՝ փողոցային առետրու արգելելու, որովհետեւ նախ պիտի աշխատատեղերը ստեղծէր, եւ, ի դէպ, աւելացնում է՝ ինքը չէր ցանկանայ, որ հայ ժողովուրդը մնայ ստրկամիտ եւ կանաչի ծախողի հոգեբանութեամբ: Եւ դարձեալ իրաւացի է. այս անօրինութիւնների դէմ պէտք է պայքարել ոչ թէ որպէս «կանաչի ծախողներ», այլ որպէս քաղաքացիներ, ովքեր պայքարում են իրենց իրաւունքների համար, եւ ոչ թէ ստրկամտօրէն իրենց առետրի համար «նպաստաւոր պայմաններ» են աղերսում:

Այսպիսով, Վարդան Բոստանջեանն արձանագրում է հետեւեալ իրողութիւնը. Հայաստանում սոցիալական լարուածութիւնն աճում է, բայց իշխանութիւններն ինքնակամ չեն հեռանալու, ընդդիմութիւնն ի վիճակի չէ վճռական գործողութիւնների դիմել, ժողովուրդն էլ սոցիալական բռնատ չի

անելու (այլ արտագաղթելու է երկրից): Սա է վիճակը:

Բայց մի հարցում, կարծում ենք, իշխանութիւնների հաշուարկը սխալ է: Եթէ «սոցիալական բռնատ» ասելով նրանք նկատի ունեն, որ մարդիկ պիտի փողոց դուրս գան, աւերեն շքեղ խանութները, հրկիրեն «գող» համարներով աւտոմեքենաները եւ յարձակուեն միլիոնատէրերի պալատների վրայ, ապա նման բռնատ Հայաստանում իսկապէս չի լինելու: Բայց մեծ հաշուով՝ արտագաղթը նոյնպէս սոցիալական բռնատ է, քաղաքացիական անհնազանդութիւնը նոյնպէս սոցիալական բռնատ է, եւ պայքարի այդ ձեւերն, ի դէպ, նոյնպէս հանգեցնում են իշխանական բուրգի փլուզման, բայց՝ աւելի դանդաղ: Հայաստանում վիճակն այնպիսին է, որ մարդիկ, անկախ իրենցից, քաղաքացիական անհնազանդութիւն են դրսեւորում: Որո՞նք են քաղաքացիական անհնազանդութեան ամենատարածուած դրսեւորումները. ասենք՝ մարդիկ գործադուլ են անում, հրաժարուում են վճարել կոմունալ ծախսերը, տրանսպորտից չեն օգտուում եւ այլն: Հայաստանում հենց այդ վիճակն է. հազարաւոր մարդիկ գործադուլ են դարձել (այսինքն՝ հարկեր չեն վճարում), տրանսպորտ չեն նստում (որովհետեւ փող չունեն), գազի սպառման ծաւալները 50 տոկոսով նուազել են, եւ այդպէս շարունակ:

Իշխանութիւններն, ի դէպ, շատ լաւ գգում են դա: Բայց համարում են, որ քանի դեռ իրենց ունեցուածքը չեն թալանել, ամէն ինչ կարգին է, եւ իրենք կարողանալու են վերահսկել իրավիճակը: Հենց սա է նրանց ամենամեծ մոլորութիւնը:

«ԶՈՐՈՐՈՂԻ ԻՆՔՆԻՇՆԱՆՈՒԹԻՒՆ»

ՄԱՍԻՍ ՇԱՐԱՔԱԹԵՐԹ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
 ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆԱՍԿԵԱՆ
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
 ՏՕԲԹ. ԱՐՇԱԿ ՊԱՇՏՏԵԱՆ
 ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
 ԳԱՐԻԷԼ ՄՈՒՆՅԵԱՆ
 ՍԱՅԱԿ ԹՈՒԹԵԱՆ
 ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ
 ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
 ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

MASSIS Weekly
 Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
 1060 N. Allen Ave.
 Pasadena, CA 91104
 Phone: (626) 797-7680
 Fax: (626) 797-6863
 E-Mail: massis2@earthlink.net
 http://www.massisweekly.com
 (USPS 667-310) (ISSN 0744-334X)
 Published Weekly
 Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
 USA \$50.00, Canada \$60 (Second Class), \$75.00 (Air Mail)
 Overseas \$85.00 (2nd Class Mail), \$125.00 (Air Mail).
 All payments must be made in US funds & Drawn on US banks.
 Periodicals Postage Paid at Pasadena CA.
 Please Send Address Change To MASSIS WEEKLY

ՀԱՅԱՍՏԱՆ

«ԲԱՐԳԱԿԱՆ ԶԱՅԱՍՏԱՆ»-Ի ԴԵՏ ՄԻԱԴՈՐՈՒԵԼ ՑԱՆԿԱՑՈՂՆԵՐԸ «ՇԱՏ ԵՆ»

«Բարգաւան Հայաստան» կուսակցութեան նախագահի մամուլի խօսման կիսաշիկ Գալստեանը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ հարցազրոյցում յայտարարեց, թէ իրենց կուսակցութեան հետ «միաւորուելու ցանկութիւն չաշտնողները շատ են»:

Նա փոխանցեց, որ այս պահին խնդրի շուրջ բանակցութիւններ են ընթանում մի շարք կուսակցութիւններ ներկայացուցիչների հետ՝ շմանաւորեցնելով, սակայն, թէ կոնկրետ որ կուսակցութիւնների:

«Կուսակցութիւնը եւ նրա առաջնորդը տարբեր բնոյթի հանդիպումներ են ունենում: Այդ հանդիպումներից շատերը ուղղակի դեռ ֆորմալացուած չեն», - յաւելեց «Բարգաւան Հայաստան»-ի առաջնորդ Գալստեանի փոխանակը:

«Նման գործընթացներ կան: Ուղղակի ժամանակից առաջ չընկնենք, ամէն ինչ իր հերթականութեան տեղի կ'ունենայ: Սա միայն պէտք է ողջունել»: - Նշեց Գալստեանը՝ պարզաբանելով. - «Միւս քաղաքական խոշոր կուսակցութիւնների շուրջ էլ այսպիսի համարձեցման պրոցեսներ կը լինեն, ինչից միանշանակ կը շահի միայն մեր ժողովուրդը, մեր ընտրողը, մեր քաղաքացին»:

Անցած շաբաթ, չիլեցները, լուծարուելու եւ Գալստեանի ղեկավարած կուսակցութեանը միանալու որոշում կայացրեց քաղաքական ակտիւութեամբ երբեք աչքի չընկած, համապետական ընտրութիւններին երբեք

չմասնակցած Հայաստանի առաջադիմական կուսակցութիւնը:

Հարցին, թէ ինչ է շահելու «Բարգաւան Հայաստան»-ը այդ միաւորումից, խաչիկ Գալստեանը պատասխանեց. - «Իւրաքանչիւր՝ թէկուզ փոքր քաղաքական ուժը իր ռեսուրսներով, իր ներուժով կարող է նպաստել ընդհանուր գործին»:

Լուծարուած կուսակցութեան նախագահ Տիգրան Ուրիխանեանը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում փաստարկելով «Բարգաւան Հայաստան»-ի հետ միաւորուելու որոշումը՝ նշեց, որ Գալստեանի ժառանգանի ղեկավարած քաղաքական ուժը միակն է, որի գաղափարախօսութիւնը իրենք կիսում են:

Հարցին, թէ ինչու չմիաւորուեցին Սերժ Սարգսեանի (ուժ սատարել է Առաջադիմական կուսակցութիւնը 2008-ի նախագահական ընտրութիւններում) գլխաւորած Հանրապետական կուսակցութեանը, Ուրիխանեանը արձագանքեց. - «Մենք չենք կիսում այդ կուսակցութեան գաղափարախօսութիւնը, բայց սատարել ենք անհատին, որը այդ կուսակցութեան ղեկավարն է»:

Տեղեկացները նաեւ, որ այս շաբաթ կը լուծարուի եւ «Բարգաւան Հայաստան»-ին կը միանայ նաեւ Հայաստանի երիտասարդական կուսակցութիւնը, որի նախագահ Վահան Բաբեանը «Ազատութիւն» ռադիոկայանի յայտնեց, որ որոշումը կ'ընդունուի գալիք շաբաթ օրը կայանալիք համագումարում:

ՌՈՒՄԵՐԵՆԻ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԸ «ՀԱՎԱՍԱՅՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԵՆ»

«Մենք դէմ ենք օտարալեզու դպրոցների վերաբացմանը» նախաձեռնութեան անդամները հակասահմանադրական են համարում Երեւանի քաղաքապետի որոշումը՝ քաղաքապետարանում ռուսերէնի դասընթացներ անցկացնելու վերաբերեալ:

Քաղաքացիական նախաձեռնութեան անդամները կարծում են, որ քաղաքապետի այս որոշումը հակասում է նաեւ Հայաստանի Անկախութեան հռչակագրին եւ «Լեզուի մասին» օրէնքին:

Օրերս Երեւանի քաղաքապետարանում կարէն Կարապետեանի եւ Հայաստանում Ռուսաստանի դեսպանատան խորհրդական Վիկտոր Կրիվոպուսկովի ներկայութեամբ մեկնարկեց քաղաքապետարանի աշխատակիցների համար ռուսերէնի դասընթացները:

«Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում «Մենք դէմ ենք

օտարալեզու դպրոցների վերաբացմանը» նախաձեռնութեան անդամ Արմէն Յովհաննիսեանը ասաց, թէ իրենք սպասում էին, որ «Լեզուի մասին» օրէնքի փոփոխութեանը կը յաջորդեն հենց այսպիսի քայլեր:

«Մենք գոռաչացում էինք, որ արհեստականօրէն միջավայր է ստեղծուելու օտարալեզու դպրոցների շրջանաւարտների համար: Յիշենք սովետական մեր անցեալը՝ աշխատանքի ընդունուած էին ռուսերէնի լաւ իմացութեամբ, եւ ռուսերէնի լաւ իմացութեան գլխաւոր գրաւականը ռուսական դպրոց աւարտելն էր», - ասաց Յովհաննիսեանը:

Ռուսերէնի դասընթացներին մասնակցելու են քաղաքապետարանի 11 բաժինների 26 աշխատակիցներ, իսկ դասընթացները ֆինանսաւորում է «Ռոսստորուզիւն-չեստով»-ն:

ԱՌԵՏՐԱԿԱՆՆԵՐԸ ՊԱՏՐԱՍ ԵՆ ԻՐԵՆՑ ԲՈՂՈՔԸ ԶՐԿԻՉՈՒԵԼՈՎ ԱՐՏԱՅԱՅՏԵԼ



Առեւտրականներ հաւաքուած էին Երեւանի Բաղախայտարանին մօտ

«Ստիպում են, մտնենք «պատշեպ» (շէնքի մունք, - Tert.am), մարդ սպանենք կամ էլ գողութիւն անենք, որ մեր երեխքին պահենք», - Երեւանի քաղաքապետ Կարէն Կարապետեանի փողոցային առեւտուրը արգիլելու որոշման դէմ՝ Յունուար 24-ին կազմակերպուած բողոքի ցոյցի ժամանակ Tert.am-ին յայտնեց տղամարդ, որ մինչեւ յիշեալ որոշումը՝ Բժշկական համալսարանի մօտ առեւտուրով կը զբաղէր:

Երեւանի տարբեր տարածքներու բացօթեայ առեւտուրի կէտերուն մէջ աշխատող քանի մը տասնեակ առեւտրականներ հաւաքուած էին Երեւանի քաղաքապետարանին մօտ: Բայց, քանի մը տասնեակ ոստիկաններ, թոյլ չտուին ցոյցը իրականացնել քաղաքապետարանի շէնքի դիմաց: Ցոյցը հսկող ոստիկաններէն մէկը՝ Tert.am-ին բացատրեց. - «Իրենց բարձրացրած հարցի կապակցութեամբ պատասխան տրուել է»:

Սօս 40 վայրկեան ետք, առեւտրականները այլեւս չլսեցին ոստիկաններուն յորդորները եւ մօտեցան քաղաքապետարանի շէնքին: Այստեղ՝ Պետական պահպանութեան ծառայութեան գունդի պետի տեղակալ Խաչիկ Աւետիսեանի հրամանով՝ ոստիկանները ժողովուրդի դիմաց պատ կազմեցին: Կանայք կը բղաւջին ու կը պահանջէին, որ քաղաքապետարանէն ռեւէ մէկը դուրս գայ ու իրենց բացատրութիւն տայ: Առեւտրականները այդպէս կանգնած ալ մնացին եւ սկսան ոստիկաններուն հետ խօսիլ, մերթնդմերթ բարձրաձայնելով իրենց պահանջներուն եւ ապօրինութիւններուն մասին:

«Ես համաձայն եմ փողոցային առեւտրի կանոնակարգմանը, բայց էդ դէպքում թող ինձ շուկայում 2-3 ամիս անվճար տեղ տան, ես աշխատեմ, իմ յաճախորդները հաւաքեմ, յետոյ նոր տեղի վարձ

տամ», - նշեց բրորդ մասի շուկայի հարեւանութեամբ աշխատած Հայկ Ասլիկեան: «Մեր պահանջն այն է, որ մեզ թողեն մեր տեղը՝ մենք մեր օրուայ հացը վաստակենք: Մենք Նոր տարուց յետոյ սոված-ծարաւ ենք: Ես երեք երեխայ ունեմ, 20 օր ա՛ տուն եմ մտնում դատարկ ձեռքերով: Ի՞նչ անեմ: Հաւատացե՛ք, այստեղ մարդիկ կան, որ էնքան վրդովուած են, որ պատրաստ են իրենց բողոքը հրկիզուելով արտայայտել», - մեզ հետ զրոյցի ժամանակ յայտնեց տղամարդ մը:

«Երեւանի 70 տոկոսը փողոցային առեւտրով ա իրա տունը պահում, հիմա ո՞նց ա լինելու: Ես համաձայն եմ՝ իմ տեղի համար փող վճարեմ, միայն թէ իմ տեղում աշխատեմ: Թող հարկեր սահմանեն, աշխատենք», - ըսաւ ցոյցի մասնակցողներէն Համլէթ Շահպազեանը:

Իսկ Յունուար 25-ին կառավարութեան շէնքի մօտ կը բողոքէին թուրքիայէն Հայաստան ապրանքներ մուծող առեւտրականները: «Հրազդան» եւ «Մալաթիա» տօնավաճառներու առեւտրականները վաղ առաւօտեան հաւաքուած էին կառավարութեան շէնքի մօտ եւ հանդիպում կը խնդրէին վարչապետի հետ:

Անոնք կը պահանջէին իջեցնել փոխադրման եւ այլ վճարները: Բեռնափողադրող ընկերութիւնները նախորդ շաբաթ կրկնապատկած էին Հայաստան ներմուծող հագուստէն զանձող տուրքերու չափը:

Մինչ առեւտրականները իրենց խնդրի լուծումը կառավարութենէ կը պահանջէին, Երեւան քաղաքի պարեկապահակային ծառայութեան գունդի հրամանատարի տեղակալ Խաչիկ Աւետիսեան պարեկապահակային գունդի հրամանատար Վալերի Օսիպեանի ներկայութեամբ ոստիկաններուն բառացիօրէն կը հրամայէր՝ «Կառավարութեան շէնքի բակից մաքրել ժողովրդին»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՋ ԱՅՍ ՏԱՐԻ ԳՆԱՃԸ ՊԻՏԻ ԿԱԶՄԵ 5-5.5 ՏՈԿՈՍ

Այս տարի Հայաստանի մէջ գնաճը պիտի կազմէ 5-5.5 տոկոս: Այս մասին այսօր լրագրողներու հետ հանդիպման ժամանակ ըսաւ ՀՀ էլեւմտական նախարար Վաչէ Գաբրիէլեան:

«2010 թուականին աւարտեցինք բաւականին բարձր գնաճով: Մենք խնդիր ունէինք յառաջարկի շոքի հետ, որի դէմ պայքարելը դժուար է: Բաւականին բարձր գնաճի դէպքում պէտք է նայել, թէ դրան որքանով է նպաստում վարուող քաղաքականութիւնը», - ընդգծեց ան:

Նախարարի խօսքով՝ Կեդրոնական դրամատան կողմէ դրամավարկային պայմաններու խտացումը, իսկ էլեւմտական նախարարութեան կողմէն յառաջիկայ տարիներուն պակասուողի կրճատումը, կը նպաստեն գնաճի զսպման:

Այս տարի Հայաստանի մէջ գնաճը պիտի կազմէ 5-5.5 տոկոս: Այս մասին այսօր լրագրողներու հետ հանդիպման ժամանակ ըսաւ ՀՀ էլեւմտական նախարար Վաչէ Գաբրիէլեան:

2010 ԹՈՒՎԱԿԱՆԻՆ ՂԱՐԱԲԱՂ Է ԱՅՑԵԼԵԼ 8 ՀԱԶԱՐ ԶԲՕՍԱՇՐՋԻԿ

2010 թուականին ԼՂՀ են այցելել աւելի քան 8000 օտարերկրեայ քաղաքացիներ, ինչը 30 տոկոսով գերազանցում է 2009-ի ցուցանիշը: Այս մասին NEWS.am-ը տեղեկանում է ԼՂՀ ԱԳՆ մամուլի ծառայութիւնից:

ԱՊՀ երկրների քաղաքացիներին բացի, Արցախ են այցելել նաեւ քաղաքական եւ մշակութային գործիչներ, մարզիկներ, գործարարներ եւ զբօսաշրջիկներ եւրամիութեան երկրներից, Ամերիկայից, Ասիայից, Աֆրիկայից եւ այլն:

Վերջին երկու տարում մեծացել է իրանից զբօսաշրջիկների հոսքը:

Շատ օտարերկրացիներ ԼՂՀ են այցելում մի քանի անգամ: Տարեցտարի ընդլայնուած է այն երկրների աշխարհագրութիւնը, որտեղից զբօսաշրջիկներ են այցելում Արցախ:

Վիճակագրութիւնը վկայում է այն մասին, որ չնայած Ադրբեյջանի ակտիւ հակազդեցութեանը, աշխարհում տարեցտարի աճում է հետաքրքրութիւնը Արցախի նկատմամբ:

ԼՈՒՐԵՐ

**ՀԱՄԱՐԲԵՐԳԸ ԼՈՒՐՋ ՁԱԽՈՂՈՒՄ Է ՀԱՄԱՐՈՒՄ
«ՄԱՐՏԻ 1»-Ի ՍՊԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ՉԲԱՑԱՅԱՅՏՈՒՄԸ**

Եւրոպայի Խորհրդի Մարդու իրաւունքների յանձնակատար Թոմաս Համարբերգը հայաստանեան եռօրեայ այցի աւարտին հրաւիրած ասուլիսում իր խորը մտահոգութիւնը հնչեցրեց 2008 թուականի Մարտի 1-ի 10 սպանութիւնները չբացատրուելու կապակցութեամբ եւ փոխանցեց, որ իշխանութիւններին կոչ է արել ազատ արձակել յետընտրական իրադարձութիւնների կապակցութեամբ անազատութեան մէջ գտնուող ընդդիմադիրներին:



Թոմաս Համարբերգ Երեւանի մէջ կայացած մամուլային ասուլիսի ընթացքին

«Այս սպանութիւնների չբացատրուած լուրջ ճախողում է, քանի որ դա նշանակում է, որ այդ գործերը չեն բացատրուել, եւ կայ անպատժելիութեան խնդիր», - յայտարարեց նա:

Համարբերգը առանձնացրեց նաեւ յետընտրական իրադարձութիւններից յետոյ անազատութեան մէջ յայտնուած ընդդիմադիր գործիչներին ազատ արձակելու խնդիրը: Եւրախորհրդի յանձնակատարը նշեց, որ թէեւ 2009 թուականին Հայաստանի իշխանութիւնները համարեման ակտ կիրառեցին, մինչեւ օրս, սակայն, անազատութեան մէջ են մնում մարդիկ, ովքեր կապ են ունեցել Մարտի 1-ի իրադարձութիւնների հետ:

«Այդ գործերը ես քննարկել եմ Հայաստանի իշխանութիւնների հետ եւ կոչ եմ արել ազատ արձակել այդ մարդկանց», - նշեց նա:

Հայաստանեան այցի ընթացքում, Համարբերգը հանդիպումներ է ունեցել անազատութեան մէջ գտնուող Նիկոլ Փաշինեանի, Խորհրդարանի նախկին պատգամաւոր Սասուն Միքայէլեանի, Յարութիւն Ուռուտեանի հետ:

Հարցին, թէ համաձայն է հայաստանեան ընդդիմութեան կարծիքին, որ յետընտրական իրադարձութիւնների կապակցութեամբ քրէական հետապնդման ենթարկուած անձինք քաղաքական բանտարկեալներ են, Համարբերգը արձագանքեց, թէ մարդու իրաւունքների մասին միջազգային համա-

ձայնագրերում գոյութիւն չունի «քաղաքական բանտարկեալ» եզրույթը, եւ պատճառն այն է, որ «այնքան էլ միանշանակ չէ, թէ ինչին է դա վերաբերում»:

Նա, այդուհանդերձ, յաւելեց, որ «առօրեայ բանավէճերում այդ եզրույթի գործածութիւնը վկայում է լուրջ խնդրի առկայութեան մասին»:

«ԵԱՀԿ-ի» դատավարութիւնների մասին գեկոյցում եւ իմ աշխատանքներում մատնանշուել է, որ այդ անձանց դատավարութիւններում լիարժէք արդարութիւն ապահովելու հարցում եղել են հիմնախնդիրներ, նաեւ օրէնքի հաւասարութեան սկզբունքը չի պահպանուել: Ես հաւատում եմ, որ նշուած երկու կարեւոր սկզբունքների խախտումը դատաքննութեան իրաւունքի եւ օրէնքի առջեւ հաւասարութեան այդ խախտումները քաղաքական ասպեկտներ են ունեցել», - յաւելեց Թոմաս Համարբերգը՝ եզրակացնելով. - «Այսպիսով, ես կարծում եմ, որ այս մարդիկ չպետք է պահուեն բանտերում, քանի որ նրանց նկատմամբ կայացուած դատավճիռներում եղել են քաղաքական նկատառումներ»:

Եւրախորհրդի Մարդու իրաւունքների յանձնակատարը փոխանցեց, որ այցի արդիւնքներով պատրաստուել է գեկոյց եւ հանդէս է դրուել կոնկրետ առաջարկութիւններով:

**ԱՐԴՈՒԼԼԱՅ ԳԻՒԼ. «ԻՆՉ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ
ՄԱՍԻՆ Է ԽՕՍՔԸ, ԵՐԲ ԻՍԹԱՄԲՈՒԼԻ ԲՈԼՈՐ
ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ ԳՈՐԾՈՒՄ ԵՆ»**

Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գիւլը ԵՆԽՎ նիստում ելույթի ունենալիս կրկին կտրուկ ժխտողական տեսանկիւնից է խօսել Հայոց ցեղասպանութեան մասին:

Թուրքական «Չաման»-ի փոխանցմամբ՝ ԵՆԽՎ պատուիրակներից մէկի՝ Հայոց ցեղասպանութեան հարցին ի պատասխան, Գիւլը նշել է, թէ չի ընդունում ցեղասպանութիւն բառը եւ յաւելել է. «Ցեղասպանութիւնն ընդունողներին կոչ ենք անում. եկէք համատեղ մի յանձնաժողով ստեղծենք: Թող հանդիպեն թէ «ցեղասպանութիւն եղել է» ասող պատմաբանները, թէ «ցեղասպանութիւն չի եղել» ասող պատմաբանները: Բացենք մեր քաղաքացիական եւ զինուորական արխիւներն ու թող յանձնաժողովն աշխատի, եւ մենք էլ ընդունենք նրանց: Եթէ կայ երրորդ կողմ, թող նա էլ մասնակցի»:



Նախագահ Աբդուլլահ Գիւլ

են եղել տեղափոխել: Բախումների ժամանակ մարդիկ են սպանուել: Դրանք ցաւալի իրադարձութիւններ էին: Ցեղասպանութիւն կոչելու համար անհրաժեշտ է մի կրօնական ուղղութեան հետեւողներին կամ ազգի ներկայացուցիչներին դիտաւորութեամբ սպանել: Սակայն այն ժամանակ մեր հայ քաղաքացիները օսմանեան պետութեան բարձրագոյն դատարանների անդամներ էին, նախագահներ էին, որոշ վայրերում Օսմանեան պետութիւնը ներկայացնող ղեկավարներ: Իսթամբուլի բոլոր հայկական եկեղեցիները գործում են: Եթէ սրան ցեղասպանութիւն ասէք, ընդունելի չէ», - ասել է Գիւլը:

**ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԲՈԼՈՐԸ ՇՏԱՊՈՒՄ ԵՆ ԿԱՐՍ՝
ՏԵՍՆԵԼՈՒ ՀԱՅ-ԹՈՒՐԲԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՍՈՒԹԵԱՆ
«ՐԻԵՇԱԻՈՐ» ԱՐՁԱՆԸ**

Կարտում հայ-թուրքական բարեկամութեանը նուիրուած հսկայ արձանը էրդողանը հրէշաւոր համարեց, որից յետոյ բոլորը շտապում են Կարս՝ տեսնելու այն:

Թուրքական «Սամանեոլու»-ի փոխանցմամբ՝ Իսթամբուլից, Իզմիրից, Անկարայից, Վանից եւ Թուրքիայի այլ քաղաքներից ամէն օր Կարս են ժամանում հարիւրաւոր քաղաքացիներ, ովքեր դիտում են յայտնի թուրք քանդակագործ Մեհմեդ Աբստիյի կերտած յուշարձանը եւ իրար մէջ քննարկում՝ արժէ՞ այն քանդակ, թէ՞ ոչ:

Նշենք, որ Կարսի նախկին քաղաքապետ Նաիֆ Ալիբեյօղլուն, ով մշտապէս հանդէս էր գալիս հայ-թուրքական սահմանի առանց նախապայմանների բացման օգտին եւ դրա համար Կարտում ստորագրահաւաք էր կազմակերպել, տարիներ առաջ նախաձեռնել էր հսկայ արձանի ստեղծումը, որը պետք է խորհրդանշէր հայ-թուրքական բարեկամութիւնը եւ խաղաղութիւնը, սակայն 2009-ին քաղաքապետի ընտրութիւններում նա պարտութիւն է կրել: Անաւարտ արձանը անորոշ ճակատագրով տեղադրուել է Կարսի հին հայկական թաղամասին կից գտնուող բարձունքում:

Երդողանի այն յայտարարութիւնը, թէ արձանը հրէշաւոր է եւ պետք է քանդել, արժանացել է թուրք մտաւորականների քննադատութեանը: Թուրք մտաւորականների եւ արուեստագէտների մի խումբը հանդէս է եկել յայտարարութեամբ՝ կոչ անելով վարչապետին՝ «հրէշաւոր» բառի համար ներողութիւն խնդրել ժողովրդից եւ արուեստագէտներից:

**«ՋԸՊԱԼԼԱՅԻ» ԹԵԿՆԱԾՈՒՆ ՆՇԱՆԱԿՈՒԵՑԱԻ
ԼԻԲԱՆԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏ**

Շարունակուած էջ 1-էն

68 ձայն, իսկ նախկին վարչապետ Սատտ Հարիրի՝ 60 ձայն: Հայ չորս պատգամաւորներ քուէարկած են Հարիրիի կողքին, մինչ Դաշնակցական երկու պատգամաւորներ քուէարկած են Միքայիլի նպաստ:

Խորհրդարանի անդամ, Ս.Դ. Հնչակեան Կուսակցութեան ներկայացուցիչ Սեպուհ Գալփագեան նախագահ Սուլէյմանի հետ հանդիպումէն դուրս գալէն ետք լրագ-

րողներուն յայտնած է որ, իրենք կը շարունակեն մնալ Հարիրիի կողքին եւ պիտի մերժեն մաս կազմել յաջորդ կառավարութեան:

Այս առթիւ, «Հըզպալլահի» հակառակորդ Սուլէյմանիները ցոյցեր կազմակերպած են Պէյրութի եւ Թրիփոլիի փողոցներու մէջ: Ցուցարարները նաեւ փակած են Սուրիա տանող գլխաւոր ճանապարհը՝ բողոքելով այդ երկրին կողմէ «Հըզպալլահին» տրուող աջակցութեան դէմ:

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԻՐԱԲԱՆՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

Շարունակուած էջ 1-էն

սպաննած են:

«Human Rights Watch» իր տարեկան գեկոյցին մէջ կ'անդրադառնայ նաեւ «Ա1+» անկախ հեռուստաընկերութեան հարցին, յայտնելով որ այդ ալիքը 8-րդ տարին ըլլալով կը մնայ փակուած: «Հեռուստատեսութեան եւ ռատիոյի մասին օրէնքին մէջ կատարուած փոփոխութիւնները՝ խօսքի ազատութեան եւ բազմակարծութեան առումով լրատուամիջոցներու համար ստեղծած են խոչընդոտներ: Կատարուած փոփոխութիւնները, մասնաւորապէս կը սահմանափակեն հեռուստաընկերութիւններու թիւը, որոնք կրնան մասնակցել թուային հեռարձակման համար յայտարարուած մրցոյթին: Հեղինակաւոր կազմակերպութիւնը կը յայտնէ որ անցած տար-

ուայ ընթացքին Հայաստանի իշխանութիւնները շարունակած են սահմանափակել նաեւ քաղաքացիներու՝ ազատ հաւաքներ կազմակերպելու իրաւունքը:

Կարծիք յայտնելով, որ Հայաստանի միջազգային գործընկերները ամբողջութեամբ չեն օգտագործած իրենց հնարաւորութիւնները՝ մարդու իրաւունքներու ապահովման համար Հայաստանի վրայ ճնշելու համար, «Human Rights Watch» մասնաւորապէս կ'ըսէ. - «Եւրոպական հարեւանութեան գործողութիւններու ծրագրի իրականացմանն առնչուող մայիսեան գեկոյցին մէջ, օրինակ, նշուած էր Հայաստանի արձանագրած յանձնարարութեան մասին, որու արդիւնքով ալ պաշտօնական Պրիւքսէլը Երեւանի հետ ընկերակցութեան համաձայնագիր կնքելու շուրջ բանակցութիւններ սկսաւ»:

ԼՐԱՑԱԲ ԱՌՆՕ ԲԱԲԱԶԱՆԵԱՆԻ ԾՆՆԴԵԱՆ 90-ԱՄԵԱԿԸ



Լրացաւ ճանաչուած հայ կոմպոզիտորներից մէկի՝ Առնօ Բաբաջանեանի (1921-1983) ծննդեան 90-ամեակը:

Նրա արուեստի երկրպագուները, մտերիմները նախ ծաղիկներ դրեցին Երեւանի կենտրոնում՝ «Կարապի լճի» մօտ նրա արձանին, ապա այցելեցին Կոմիտասի անուան պանթէոն՝ յարգանքի տուրք մատուցելու սիրուած կոմպոզիտորի շիրիմին:

Բաբաջանեանը ստեղծագործել է երաժշտական տարբեր ժանրերում՝ սիմֆոնիկ, կամերային, էստարադային, անգամ ռաբիս երգի մշակում ունի:

«Անսպառ տաղանդի տէր մարդ էր», - կոմպոզիտորի 90-ամեակի կապակցութեամբ հրատարակուած ասուլիսում ասաց երաժշտագէտ Նելլի Աւետիսեանը: - «Առնօ Բաբաջանեանի երաժշտութեան զարմանահարաշեղ երեւոյթներից մէկը այն է, որ նա աստուածատուր տաղանդ ունէր, մեղեդի կերտելու տաղանդ»:

Երգչուհի Ռաիսա Մկրտչեանը, որ ժամանակին կատարել է Բաբաջանեանի ստեղծագործութիւններից

շատերը, «Ազատութիւն» ռատիոկայանին ասաց. - «Իր հետ աշխատելը անչափ հեշտ էր: Որովհետեւ սովորաբար երգիչները արդէն ճանաչուած էին՝ Բելա Դարբինեանը, Գէորգի Մինասեանը, ամէն մէկը իրենն է դնում: Իր համար շատ հաճելի էր, որ ամէն մէկը իւրովի էր ներկայացնում երգերը»:

«Հաւատաւ չի գալիս, որ նա այսօր պէտք է 90 տարեկան լինէր», - ասաց Բաբաջանեանի մտերիմ ընկերներից կոմպոզիտոր Մելիք Մաւիսակալեանը՝ շարունակելով. - «Նա իւրապատուկ անձնաւորութիւն էր: Ամէն ինչի մէջ ձգտում էր առաջնութեան... ոչ մի բանի մէջ չէր ուզում գիշերել»:

«Առնօ Բաբաջանեան» հիմնադրամի հայկական մասնաճիւղի ղեկավար Ժաք Յակոբեանը «Ազատութիւն» ռատիոկայանի հետ զրոյցում փոխանցեց, որ ամբողջ տարին հռչակել են բաբաջանեանական տարի. կը լինեն համերգներ, Բաբաջանեանի անուան դաշնամուրային մրցոյթ, նրա ստեղծագործութեանը նուիրուած գիտաժողով:

ՖՐԱՆՍԱ ԳՐԱՆԴ ՏԻՆՔԻ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՅԻՇԱՏԱԿԻ ԲԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ



Ֆրանսայի Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան «Նազարբէկ» Երիտասարդական Միութիւնը, Զորեքշաբթի Յունուար 19ին, 2011, յուշ-երեկոյ մը կազմակերպած էր նուիրուած՝ Պոլսահայ յայտնի գործիչ, «Ակօս» թերթի գլխաւոր խմբագիր Հրանդ Տինքի սպանութեան 4րդ տարելիցին առթիւ:

Հրանդ Տինքի յիշատակին նուիրուած սոյն հանդիսութիւնը տեղի ունեցաւ Փարիզի արուարձաններէն՝ Ալֆրօլիլի Հայ Երիտասարդաց Կեդրոնի հանդիսասրահին մէջ, որուն ներկայ գտնուեցաւ խուռներամ բազմութիւն մը:

Սոյն յիշատակի միջոցառու-

մին օրուան զեկուցաբերը՝ հանգամանօրէն արտայայտուեցաւ Հրանդ Տինքի մասին, որպէս դրօշակակիրը խօսքի ու խղճի ազատութեան եւ քաջ պաշտպանը հայոց ցեղասպանութեան, ինչպէս նաեւ թրքաբնակ փոքրամասնութիւններու ազգային արժանապատուութեան եւ մարդկային իրաւունքներուն:

Այնուհետեւ ցուցադրուեցան վաւերագրական գոյգ ֆիլմեր առաջինը՝ Հրանդ Տինքի կենսագրութիւնն էր, իսկ երկրորդը՝ օրուան գլխաւոր հիւր բեմադրիչ Սերժ Աւետիքեանի «Մենք խմած ենք միեւնոյն ջուրը» ժապաւէնը:

ՇԱՐԼ ԱԶՆԱԲՈՒՐ ՊԱՏՐԱՍ Է ԿԵԱՆՔԻ ԳՆՈՎ ԴԻՍԱԴՐԵԼ ՍԱՐՔՈԶԻՒՆ

Շարունակուած էջ 1-էն

Ժողովուրդը պատասխանատու է եւ համարձակ: Ան արիւն տուած է իր երկրին համար: Ես առաջին անգամն է որ կը խօսիմ այս մասին, բայց եթէ նախագահը չի փոխուի ես կ'օգտուիմ իր ձայներէն, երբ ժամանակը գայ» յայտարարած է Ազնաւուրը:

Ան նշած է որ Ֆրանսայի մէջ առնուազն 400,000-500,000 հայ կ'ապրի: «Հայկական ծագում ունեցող իւրաքանչիւր ֆրանսացի կ'աջակցի ինձի: Եթէ այսպէս շարունակուի, ես ամբողջովին կը նուիրուիմ այս գործին: Ես քաղաքականութեամբ չեմ զբաղիր, բայց ունիմ քաղաքական զգալի ոյժ: Ես գիտեմ որ կեանքս կը վտանգեմ ասիկա ըսելով: Բայց իմ այս տարիքիս, վերջ ի վերջոյ ինչ կը նշանակէ կեանքը ռիսքի տակ դնել», ամփոփած է 86-ամեայ Ազնաւուրը, որ Զուլիցերիոյ Հայաստանի դեսպանն է:

Ազնաւուրն այս կերպով պատասխանած է WikiLeaks-ի հերթական բացայայտումին, որուն շնորհիւ հասարակութեան յայտնի դարձաւ որ Նիքոլայ Սարքոզին թուրքիոյ խոստացած է Օսմանեան կայսրութեան 1915-1917 թուա-

կաններուն հայերու ցեղասպանութեան հերքումին համար քրէական պատասխանատուութիւն սահմանող ֆրանսական օրինագիծը «Թաղել Սենաթին մէջ»: Արդարեւ, նախընտրական փուլին մէջ Սարքոզին ֆրանսահայերուն խոստացած էր աջակցիլ օրինագիծի ընդունման հարցին: Նշենք նաեւ որ Ֆրանսայի հերթական նախագահական ընտրութիւնները 2012ին են եւ հնարաւոր է Սարքոզիի մասնակցութիւնը:

Նշենք որ վերջին շրջանին Ազնաւուրը քաղաքական առաջնորդներուն բազմաթիւ կոչեր ուղղած է: Նախօրէին ան կոչ ուղղած է Իսրայէլի պաշտօնապէս ճանչնալու 1915ի Օսմանեան թուրքիոյ մէջ եղած Հայոց ցեղասպանութիւնը:

Յունուարի 23ին Փարիզի Երուսաղէմի համալսարանին միջազգային մրցանակն ստանալու ատեն Ազնաւուրը յայտարարած է որ միայն վերջին տարիներուն բացայայտուած է թուրքիոյ «Քարանձաւային հակասեմականութիւնը»: Ազնաւուրը յիշեցուցած է որ թուրքիան Մերձաւոր Արեւելեան բոլոր հիմնախնդիրներու վերաբերեալ որդեգրած է հակաիսրայէլական դիրքորոշում:

News.am

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
 Enclosed a check for (one year)
 * \$50,00 for USA
 * \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.
 * \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----
 Address: -----
 City: ----- State:----- Zip Code:-----
 Country: -----
 Tel :----- Fax : -----


ՓՐՈՖ. ԳԵՈՐԳ ԽՐԼՈՊԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Ծ.Խ. Տարի մը առաջ, Յունուար 30, 2010ին իր մահկանացուն կնքեց Փրոֆ. Գեորգ Խրլոպեանը: Մահուան առաջին տարեկիցին առթիւ մեր ընթերցողներուն կը ներկայացնենք Յարութ Տր Դաւիթեանի խօսքը, արտասանուած Նոր Սերունդ հեռուստաժամի Փետր. 4, 2010ի յայտագրէն, ինչպէս նաեւ սղագրութիւնը այն վերջին հարցազրոյցին, զոր վարած էր Փրոֆ. Խրլոպեանի հետ Յունուար 29, 2009ին:

Նոր Սերունդ Մշակութային Միութեան անդամներուն, համակիրներուն, ինչպէս նաեւ Նոր Սերունդ հեռուստաժամի ունկնդիրներուն եւ մեր ժողովուրդին համար անդամները մեծ կորուստ էր Փրոֆ. Գեորգ Խրլոպեանի մահը, որ տեղի ունեցաւ քանի մը օրեր առաջ, Յունուար 30, 2010ին:

Անձնապէս մեզի համար Փրոֆ. Խրլոպեանը ձեռքի մատներու վրայ համրուող այն անձնաւորութիւններէն մին էր, որ մեծ ազդեցութիւն ունեցաւ մեր նկարագրի ու գիտակցութեան կերտման վրայ: Ամէն մարդ, որ կը ձգտի իր կեանքը լաւագոյնս արժեւորել եւ իմաստաւորել, կը փնտռէ օրինակելի տիպարներ, որոնք կրնան իր ճամբան հունաւորել այդ ուղղութեամբ: Փրոֆ. Խրլոպեանը, իր բազմակողմանի հմտութիւններով, լայն մտապաշարով, հարցերը խորը քննելու կարողութեամբ եւ լաւատես ու կառուցողական աշխարհայեացքով, այդպիսի տիպար մը հանդիսացաւ մեզի համար: Իրեն հետ ամէն մէկ հանդիպում խթան մը կը հանդիսանար ձգտելու աւելի բարձրին:

Մենք շատ տպաւորուած էինք իր անխնայ աշխատասիրութեամբ: Հակառակ իր 82 տարեկան հասակին, մեզի համար Փրոֆ. Խրլոպեանը ծեր չէր, որովհետեւ միշտ ունակ էր ծաւալելու իր մտապաշարը եւ իր գիտելիքները բաշխելու իր շրջապատին: Ծեր է այն մարդը, որ ինչ տարիքի ալ ըլլայ, կը դադրի իր մտապաշարը ընդլայնելու աշխատանքին: Քանի մը շաբաթներ առաջ, մեր վերջին հանդիպման ընթացքին, նոր հաղորդաշար մը իրագործելու ծրագիրը քննարկեցինք իր հետ: Մեր գրոցը այնքան խանդավառ ընթացաւ, որ երբէք մեր մտքին չանցաւ որ այդ մէկը մեր վերջին հանդիպումը կրնար ըլլալ: Ինք ներքնապէս թերեւս կը զգար որ պիտի չի կրնայ իրագործել այդ ծրագիրը, բայց արտաքնապէս երբէք ցոյց չտուաւ ու միայն քաջալերական խօսքեր արտասանեց: Մենք անձնապէս այդ հանդիպումէն դուրս եկանք այն տպաւորութեամբ, որ պիտի կրնանք յաջողցնել այդ ծրագիրը: Մեզ ճամբեց խանդավառ տրամադրութեամբ եւ քաջալերական խօսքերով ուժ տուաւ մեզի: Իր բացակայութիւնը շատ զգալի պիտի



Ըլլայ բոլորիս համար:

Բայց մենք պիտի մխիթարուինք իր թողած աւանդով եւ այն մտային ու հոգեկան վաշտի պահերով, որ իր հետ ապրեցանք: Ճիշդ է որ մահը մեր աշխարհիկ կեանքին վերջ մը կը դնէ, բայց չի կրնար վերջ դնել այն աւանդին, այն յիշատակներուն, զոր մեր ետին կը թողուինք: Ուստի այսօր ձեզի պիտի ներկայացնենք Նոր Սերունդ հեռուստաժամին իր վերջին ելոյթը: Դիպուկ է հեռուստադիտողի մը հարցին որպէս պատասխան, յայտագրի աւարտի իր վերջին խօսքը՝ թէ ինք իր գիտութիւնը առաւ ժողովուրդէն ու վերադարձուց ժողովուրդին: Իր կեանքը իր ժողովուրդի կեանքին հետ ընդելուզած գիտակից մարդու խօսք է ատիկա: Գիտնական բայց համեստ մարդու խօսք: Այդ խօսքը մեզի կը յիշեցնէ ծովի ալիքին պատմութիւնը:

Կը պատմուի թէ ալիք մը կար, որ ծովին վրայ կը ծփար, կ'ելեւէջէր, հովին հետ կը խաղար եւ ուրախ էր մինչեւ որ կամաց կամաց մօտեցաւ ծովափին ու յանկարծ նշմարեց, որ իրմէ առաջ եղող ալիքները կը փշրուին ծովեզրին վրայ: Տակնուվրայ եղաւ ու սկսաւ մտահոգուիլ ու վախնալ, որ քիչ մը ետք իր ալ վերջը պիտի գայ: Ուրիշ ալիք մը իրեն հարցուց թէ ի՞նչու այդպէս տակնուվրայ կ'ըլլար: Ինք պատասխանեց թէ չէ՞ր տեսնէր ու չէ՞ր հասկնար որ քիչ մը ետք իրենք ալ պիտի վերջանային: Միւս ալիքին պատասխանը եղաւ.

- Դուն ես որ չես հասկնար: Դուն սոսկ ալիք մը չես, այլ այս

ծովին մէկ մասնիկն ես: Ծովեզրին փշրուելով դուն չես վերջանար, այլ շարունակով անոր մէջ, կը մնաս անոր մէկ մասնիկը ու կը գոյատեւես այնքան ատեն որ կը գոյատեւէ այս ծովը:

Մեր մաղթանքն է, որ ամէն մէկս գիտակցինք որ սոսկ անհատներ չենք, այլ նաեւ հայ ժողովուրդի մէկ մասնիկը: Երբ կը փորձենք մեր կեանքերը արժեւորել ու իմաստաւորել, մտածենք նաեւ մեր ժողովուրդի, մեր ազգի մասին, որպէս զի կարենանք մեր ապագայ սերունդներուն հայթայթել այն ծովը, որուն վրայ կրնան ծփալ: Մեր մաղթանքն է նաեւ, որ ինչպէս Փրոֆ. Խրլոպեանը կ'ըսէ իր հարցազրոյցին մէջ, մենք միայն չի կեդրոնանանք մարմինին, արտաքինին վրայ, այլ նաեւ մեծ կարեւորութիւն տանք հոգիին ու մտքին, արծարծելով ու վառ պահելով մեր ներքին կրակը:

Այսքանով կ'աւարտենք մեր խօսքը: Եկէ՛ք ըմբռնենք այդ հարցազրոյցը:

-Սիրելի հեռուստադիտողներ: Ուրախ ենք Նոր Սերունդ հեռուստաժամի ուղիղ եթեր յայտագրով ամգամի մը համար եւս հիւրընկալել մեզի յարգելի սիրելի Փրոֆ. Գեորգ Խրլոպեանը: Շնորհակալութիւն Փրոֆ. որ ընդառաջեցիք մեր հրաւերին:

- Պատիւը իմն է: Ինձ համար միշտ հաճելի է Նոր Սերունդի հետ լինել երկու իմաստով. ե՛ւ որպէս կազմակերպութիւն ե՛ւ որպէս սերնդի յաջորդականութիւն:

- Նկատի առնելով ձեր մասնագիտական լայն պաշարը որպէս պատմաբան, գրականագետ, մանկավարժ, հոգեբան, եւ այլն, այսօր կ'ուզիք մեզի հետ սրտբաց զրոյց մը վարել որոշ հարցերու մասին, որոնք ժամանակէ մը ի վեր միտքս կը տանջեն: Հարցեր մեր ժողովուրդի անցեալի, ներկայի եւ ապագայի մասին: Օրինակի համար, ինչո՞ւ մեր թուաքանակը այդքան չէ աճած եւ գրեթէ նոյնն է ինչ որ եղած էր 2000 տարիներ առաջ: Ինչպէ՞ս պատահեցաւ որ այդքան հարուստ մշակոյթի տեր, զարգացած ժողովուրդ մը ըլլալով հանդերձ, 10-11րդ դարերուն Միջին Ասիայէն արշաւող վայրենի ցեղեր իշխեցին ու տիրապետեցին մեր վրայ: Ինչպէ՞ս կ'ըլլայ որ մօտ 200 տարուան պատմութիւն ունեցող ԱՄՆը հասաւ այսպիսի բարձրունքի, մինչ մենք հակառակ 4-5000 տարուան մշակոյթ ու պատմութիւն ունենալու, կը մնանք հոն ուր որ ենք: Ինչպէ՞ս կը մեկնաբանէք այս հարցերը: Ինչպէ՞ս կը մեկնաբանէք, որ որպէս հայ անհատներ մենք հիմնալի յաջողութիւններու հասած ենք, բայց որպէս հաւաքականութիւն չենք կրցած մնանորինակ յաջողութեանց հասնիլ: Եթէ կ'ուզէք սկսիք այս վերջին հարցումը:

- Հարցը շատ ընդարձակ ու խորն է: Բայց ես նախ պատասխանեմ ձեր հարցերուն սահմանափակ ձեւով ու ապա կ'անցնեմ աւելի լայն մօտեցման: Խնդիրը այն է, որ երբ առաջացաւ նոր աշխարհի մշակոյթը, այդ մէկը չեղաւ իր հիմքի վրայ: Այսօր ԱՄՆի մշակոյթը պատմական Ամերիկայի մշակոյթի շարունակութիւնը չէ: Այլ՝ առաջին հերթին Եւրոպական մշակոյթի շարունակութիւնն է (Անգլիական, Ֆրանսական, Իտալական, Գերմանական եւ համաշխարհային): Հետեւաբար ԱՄՆի 200 տարին փաստօրէն իր յետեւում ունի եւ Չինական մշակոյթ եւ Արաբական, Եւրոպական եւ բոլոր հին մշակոյթները: Այս բոլորը եկան եւ համալրուեցին այստեղ: ԱՄՆի կատարած մշակութային քաղաքականութիւնը այն էր, որ նա կարողացաւ այդ բոլոր մշակոյթներուն միանալու, համադրուելու եւ նորակերտ հանդէս գալու հարաւորութիւնը տալ: Նոյնը կարող էր անել ժամանակին Թուրքիան: Այն եկաւ ու ընդգրկեց այդ ժամանակուան շատ քաղաքակիրթ աշխարհը. Յունական, Արաբական, Պարսկական եւ այլն: Բայց ի՞նչ արեց: Այդ մշակոյթները զարգացնելու, համալրելու փոխարէն, նրանց ճզմեց, նրանց խանդարեց եւ իր բարբարոսական աւանդութիւնները դարձրեց իշխանական, միաժամանակ գողանալով միւս մշակոյթներէն այն ինչ որ կարող էր օգտագործել: Հետեւաբար հարաւորութիւն չտուաւ այն աշխարհին որուն տիրապետեց, շարունակելու հոն եղած մշակութային զարգացումը եւ նոր բարձրունքներու հասցնելու: Նոյն մէջակէտից իրենց ժամանակին կարողացան որոշ չափով այդ կատարել, ընդգրկելով Հելլենիստական մշակոյթը: Յոյները նոյնպէս: ԱՄՆի մեծագոյն ներդրումը համաշխարհային քաղաքակրթութեան այն էր, որ համաշխարհային ստեղծագործական միտքը, համաշխարհային ժողովուրդների մերձեցման միտումը դրաւ մոզայիքի մէջ եւ այդ դարձրեց Ամերիկեան մոզայիք, որի ամէն մէկ գեղաքարը, տարբեր երկրներից եկած արժէքներն էին: ԱՄՆը կարողացաւ այդ ընել եւ եթէ կարողանայ այդ աւանդույթը շարունակել, մեծամտական միտումներ չունենայ, իր ռազմական ուժը չի գերազանհատի եւ զայն իր ուժի տիրապետութեան գլխաւորը չի համարի, կարող է շարունակել համաշխարհային քաղաքակրթութեան բերած իր ներդրումը:

Երկրորդ. պէտք է նաեւ նկատի առնել որ մենք ունենք հին ազգեր եւ երիտասարդ ազգեր: Հին ազգերի պատմութիւնը հասունացման պատ-

Շար.ը էջ 17

 <p>Blue Cross of California Authorized Agent</p>	 <p>Blue Shield of California Authorized Agent</p>	<p>SERVING SINCE 1975</p> <p>BEDROS S. MARONIAN</p> <p>(818) 500-9585 BMaronian@AOL.com</p> <p>FAX 500-9308 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205</p> <p>ԵՐՐԵՔ ՈՒՅ ԶԷ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ԶԵՐ ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ</p>	
 <p>A.A. INSURANCE SERVICES</p>			

ԳՕՍԹԱ ՄԵՍԱՅԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ՅԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՐԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 25-ԱՄԵԱԿԸ ՊԻՏԻ ՏՕՆՈՒԻ ՅՈՒՆԻՄԱՐ 30, 2011-ԻՆ

Volunteers began early in the morning gathering at several places including at the Peregamoutyuan Metro Station, the Alexander Tamanyan Monument, the Armenian Red Cross Society and Eurasia International University. They made their way to the American University of Armenia where Karen Aghababyan, Director of Acopian Center for the Environment, addressed volunteers stressing how important their service was to helping promote an environmentally friendly and clean community.

Supporters of the successful community service project include Yerevan City Hall and Jean Jacques Ajamian -

Sanga Est. Yerevan City Hall arranged for the pick-up of the garbage and Sanga Est supplied the garbage bags. "We are grateful to Yerevan City Hall and Jacques Adjemian - Sanga-Est LLC not only for their tangible support but also for promoting the importance of volunteerism," stated AVC director Sharistan Melkonian.

"Volunteers from all over Yerevan and AVC volunteers from all over the world, many of whom are sponsored by Birthright Armenia, joined together to make a difference," continued Melkonian. "We have said it before and we'll say it again. Volunteerism is an integral part of a strong nation because a country's needs always surpass the limits of government. Creating a community of engaged citizens is an important part of AVC's mission."

The International Volunteer Day clean up was one of many community service projects AVC organizes throughout the year.

AVC was founded in 2000 to serve Armenia through volunteerism. Since its inception, over 300 volunteers have served in over 200 organizations throughout Armenia. For more information about AVC visit www.armenianvolunteer.org.

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆՆԱԿՆԵՐ

1060 North Allen Ave

Pasadena, CA 91107

Գրասենյակները վերանորոգուած

եւ յարմար վարձքերով

Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝

(626) 398-0506

ԷՋԵՐ ԲԵՆԻԱՄԻՆ ԺԱՄԿՈՉԵԱՆԻ ՅՈՒՇԵՐԷՆ ԴԱՆԴԻՊՈՒՄ ՓԱՐԱՄԱԶԻ ԴԵՏ

Եկաւ փարամագը: Ինչ ալ ըսեն կամ գրեն, գիւղ ու քաղաք հմայեց: Համեստ պանդուկի մը խեղճուկ մէկ սենեակը կ'ապրէր:

Այցելեցինք: Յեղափոխական այդ հսկան, համեստ հօրեղբօր մը նման, ցածուկ մահճակալին վրայ նստած կը խօսէր: Յատկապէս Հնչակեան շարքերը հմայեց: Խորունկ ծանօթութիւն ունէր ընկերային, փիլիսոփայական, գիտական հարցերու շուրջ:

Ձատկի Մեռելոցին, Մեգիրէի գերեզմանատան մէջ, Յաբէթ Յակոբի շիրմին վրայէն խօսեցաւ ծովածաւալ բազմութեան մը:

Երկտրականացուց՝ երբ ըսաւ. «Հոն՝ ուր կախաղաններ են ճօճ-լուծ, ազատութիւնն է ման գալիս, հոն՝ ուր մեռելներ են ննջում, յարութիւնն է մօտալուտ»: Կարելի չէր բանախօսութիւնը միտք պահել: Ո՛հ, եթէ այսօրուան ձայնագրող մեքենաները գոյութիւն ունենային...:

Ժամանակ մը Խարբերդ մնաց, ապա սեբաստացի ընկեր վահագնին հետ անցաւ Տիգրանակերտ, Լրճէ, նոյնպէս Հայնի՝ իմ գիւղս: Մեծ մամիկա կ'ըսէր. «Շրջիկը եկաւ, շրջիկը գնաց»:

Ամառը՝ երբ գիւղ գացի, գարմացումով տեսայ երիտասարդներու գաղափարական հետաքրքրութիւնը: Ձուլհակներ կը վիճէին «ժառանգականութիւնն ի՞նչ միջավայր», եւ նման լուրջ հարցերու մասին: Փարամագ՝ ո՛ւր որ գնաց, հետը լոյս, ջերմութիւն, գարգացում տարաւ: Լրճէի մէջ ա՛յնքան գրաւեց ժողովուրդը, որ քիւրտերն անգամ իրենց միջեւ գոյութիւն ունեցող դատերուն համար իրեն դիմել սկսան՝ իր եւ ընկեր վահագնի ունեցող դատերուն խնդրելով («միջնորդ» բառով պատմուածները չափաւորել կ'ուզեմ. այլապէս ըրածները միջնորդութենէ շատ աւելի էին): Իր վախճանը հանրածանօթ է:

Ս. Վահագն, համեստ հնչակեան գինուոր-գործիչ մը, միշտ յեղափոխական էր: Աւելի շիտակը, ընկերվարական շունչով լեցուն՝ ընկերացած էր Փարամագի:

ԲԱՔԵԼՈՆԸ ԿԱՄ ԱՆԻՇՆԱՆՈՒԹԻՒՆ

Կատարեալ բաբելոնական խառնակութիւն մը կը տիրէր

Կարնոյ մէջ: Քսանէ աւելի առանձին խումբեր կային: Ահա՛ յիշողութեանս մէջ մնացած քանի մը անուններ.՝ Մուրատաքի, Երգինկեանաքի (թերեւս երկուքը նոյնն էին), Սեպուհաքի, Պայպուրթաքի (ասոնք ալ թերեւս նոյն խումբն էին), Էրզրումաքի: Իւրաքանչիւր խումբ իր շարմար նկատած թաղին մէջ տուն մը գորանոցի վերածած կը կենար: Մեր խումբը Սանասարեան վարժարանին եւ ամերիկեան հաստատութիւններուն միջեւ գտնուած տուն մը գրաւած էր: Տունը՝ ձիաւորներու փոխան՝ միայն ձիերու գորանոցն էր. իսկ ձիաւորներէն անոնք որ ազգական, բարեկամ կամ ծանօթ մը ունէին, գիշերը անոնց քով կ'անցնէին ու կերակուրը անոնց հետ կ'ուտէին:

Նախապէս յիշած եմ թէ գրուածներէն մեծ մասին ակնանատես եղած եմ, եւ մաս մըն ալ՝ ակնաշալուր: Հոս ըստեցաւ թէ Պ. Մուրատաքի բռնած է գաղտնի հեռաձայնային հաղորդակցութիւն մը թրքական բանակին եւ քաղաքապետ Աղամալեանի միջեւ, եւ խօս-



ուեցաւ ծախսուած մեծաքանակ ալիւրի եւ շաքարի մասին: Սակայն Պ. Մուրատաք, թէեւ պարտուած, ինքզինք ըստ իր սովորութեան տուած էր Աննիաբաղեան կեանքի մը, որով այդօրինակ հարցեր միմիայն լսեց եւ ո՛չ մէկ քայլ առաւ:

Գուցէ կուսակցական կարգապահութիւնն ալ իր դերը ունեցաւ: Արդէն գոյութիւն ունեցող քսանէ աւելի խումբերէն ոչ մին միւսին ենթակայ էր:

Բաբելոնական խառնակութիւնը հիանալիօրէն նկարագրուած էր ՀԱՅԱՍՏԱՆԻ թերթին մէջ, որուն խմբագիրներէն էին Լեւոն Լիւլիճեան, Վահան Թոթովեանց, որքան կը յիշեմ:

Մինչ մեր ներքինը այսքան անկարգ եւ անզուխ թո՛հ ու բո՛հի մատնուած էր, թրքական բանակը կը յառաջանար եւ ներսէն՝ Կարնոյ անկումին Կարնոյ մէջ լուծուած Չորրորդ բանակը դաւադրի գործունէութեան լծուած էր: Միտնորտը արդէն աննշխի դարձած էր: Մարտափը Դամոկլեան սուրի մը պէս կախուած էր մեր գլխուն վերեւ եւ փոթորիկը ապահովաբար պայթելու վրայ էր: Այս դառն իրականութիւնը մեր երեսին դաշուլու աստիճան թանձրացած էր, բայց մենք ներքնապէս մատնուած էինք կատարեալ անիշխանութեան: «Սքանչելի» Մուրատը, «ողբացեալ» Աղմալեան (այս չափերտուած բառերը դաշնակցական պատմաբան Պ. Վարանդեանի գրքին մէջ գործածուած են), իր յուշերով հրապարակը ողողող Սեպուհաք լուռ էին, սահմուկած:

Ահաբեկ վիճակի մէջ էր հայութիւնը, որ բուռ մը յարդի պէս պիտի ոչնչանար, եթէ փրկութեան արեւը պայծառօրէն չծագէր յանկարծ:

«Անդրանիկը կու գայ...»: Մեզի՛ ճակատէն եկողներուս համար ասիկա կ'արժէր ամէն բան: Անդրանիկը հերոսական ճիգերու մարմնացումն էր, եւ գինուորը, հերոսական գործով մը կը գրաւուի, կ'ոգեւորուի, հերոս կը դառնայ: Քաջութիւնն ալ տարափոխիկ է:

Անդրանիկը գրեթէ հետիոտն մտաւ Կարին, ո՛չ թէ «արտակարգ շուքով ու հանդիսութեամբ» (այսպէս գրած էր Վարանդեան), որուն արժանի էր: Յաջորդ օրը Պ. Մուրատաք հրամայեց մեր յիսնեակին, որպէսզի երթանք Անդրանիկին ձիերու մէջ մնացած ինքնաշարժ բերենք: Ասիկա մեծ պատիւ մըն էր մեր յիսնեակին. բայց այս պատիւին արժանի ըլլալուս համար չէր որ մեզի հրամայուեցաւ, այլ ուրիշ որեւէ խումբ չկար՝ իր հրամանին ենթակայ:

Գացինք, եւ ո՛վ ապշուցիւն, ձիերուն մէջ գտանք բեռնատար


(«քամիոն») մը: Ատկէ հետեցնելով գրեցի. «Գրեթէ հետիոտն մտաւ Կարին»: Անդրանիկ, տեսնելով թէ ինքնաշարժ ձիերուն մէջէն պիտի չկարենայ յառաջանալ, հոն կը ձգէ, եւ ինք՝ իր մէկ-երկու ընկերակիցներով քաղաք կը մտնէ քալելով:

Ուրիշ միջոց կա՞ր: Իր գալուստը ա՛յնքան հրճուանք առթած էր, որ գինք տեսնելու փափաքէն գատ ո՛չ մէկ բան ունեցայ. որով ճիշդ չեմ գիտեր ինչպէ՛ս մտնելը:

Տարիներով երազած էինք Անդրանիկը, եւ ո՞վ կրնար կապտել Կարնոյ հայութիւնը, որ չվագէր փողոց, չբարձրանար տանիք, չէլէր պատշգամ՝ տեսնելու համար իր Հերոսը, որուն մըռնչիւնէն սուլթանը դողացեր էր: Ժողովրդային այս ինքնաբուխ հետաքրքրութիւնը «արտակարգ շուք» թարգմանած էր դաշնակցական տեսաբան Պ. Վարանդեան, արեւուն վրայ բիծ տեսնելու չար մտածումով: Բայց Անդրանիկ երկու-երեք օր ետք իրեն վայել հիանալի եւ շուքով ցոյց մը ըրաւ:

Իմացած էինք թէ դաշնակցութիւնը գանազան դժուարութիւններ չարուցած էր, իրեն ընկերացող կամաւորները ցրուելու աշխատանքէն մինչեւ կանոնաւոր զօրավարի մը վայել ինքնաշարժ մը չտրամադրելու աստիճան: Բայց Անդրանիկ Կարին հասաւ, եւ իր ետեւէն եկան Սարգիս Արղամանեան եւ ութսուն ձիաւորներ: Ասոնք գիշեր մը հանգիստ ըրին, բայց յաջորդ առտու Անդրանիկ առաւ իր ձիաւորները ետեւը՝ ու փոթորիկի պէս շրջեցաւ Կարնոյ փողոցները: Ութսուն ձիաւոր ոչինչ են թողլով իր վրայ. սակայն ութսուն ձիաւոր ամէն ինչ են, երբ մէկ մէկու ետեւէն փողոցներու մէջէն կը սուրան:

Չօր. Նազարբէկեան կազմ ու պատրաստ բանակ կ'ուզէր ճակատ գալու համար, բայց Անդրանիկ



միայն այս ութսուն ձիաւորներով փրկեց Կարնոյ հայութիւնը: Իր այս մէկ ցոյցը սահմուկեցուց թուրքերը: Մինչեւ այդ օրը՝ քսանէ աւելի գինուորականներ կային Կարնոյ մէջ եւ նոյնիսկ անկախութիւն հռչակել մտածողներ եղան. բայց ո՛չ մէկ թուրք հպատակութեան նշան ցոյց տալու քայլ առած էր: Սակայն Անդրանիկի այս ցոյցը խոնարհեցուց բոլոր դաւադիր դեկավարները, քաղաքացի կամ քաղաքացիի դիմակով ապրող գինուորական, որոնք համախումբ բարի գալուստ մաղթելու եկան:

Այդ օր կատարուեցաւ արտակարգ շուք ու հանդէս, որուն ակնարկած էին ոմանք: Կարին գտնուող խումբերը վագեցին Անդրանիկին քով: Անդրանիկ բոլորը շարել տուաւ հրապարակի մը վրայ,

Մար. ք էջ 17



KEBAB PARTY

Զմեյտրուպիս

ԽՐԱԽԱՃԱՆՔ

Կազմակերպութեամբ՝
ԿԼԵՆՏԷՅԼԻ ԱՐՍԷՆ ԿԻՏՈՒՐ
ՄԱՍՆԱԾԻՒՂԻ

Շաբաթ, 29 Յունուար 2011
երեկոյեան ժամը 8:00-էն սկսեալ
1060 North Allen Avenue
Pasadena, CA 91104

Մուտքի նուէր՝ \$15
Տոմսերու համար դիմել՝
(213) 629-4758 (818) 762-0933

Հովանավորությամբ՝

ՀԲԸՄ-ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՓՈԽ-ՆԱԽԱԳԱՀ

ՏԻԱՐ ՍԻՆԱՆ ՍԻՆԱՆԵԱՆԻ

ՀԲԸՄ ՄԱՆՈՒԿԵԱՆ-ՏԵՄԻՐՃԵԱՆ ԵՒ ՀԲԸՄ ՎԱԶԷ ԵՒ ԹԱՄԱՐ
ՄԱՆՈՒԿԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆԸ

Պատիւն Ունի Հիրընկալելու

ԴՈԿՏ. ԵՐՈՒԱՆԴ ԶՕՐԵԱՆԸ

Անդամ ՀԲԸՄ Կեդրոնական Վարչական Ժողովի

Եւ Հիմնադիր Նախագահի Համացանցային Համալսարանի

Պիտի Ներկայացուի ՀԲԸՄ-ի Ուսումնական Նորագույն Հաստատությունը՝
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ

ARMENIAN VIRTUAL COLLEGE

Ուրբաթ, 11 փետրուար, 2011 կ. ե. 8:00- ին

ՀԲԸՄ-ՄՏՎ Աղաճանեան Հանդիսասրահ

6844 Oakdale Avenue, Canoga Park, California

ՀՀՀ-ին նպատակն է համացանցի ժամանակակից նուաճումներու միջոցով
փոխանցում՝ մշակութային կրթութեան եւ ընկերային կապերու:

Ցաւելեալ տեղեկութեանց համար դիմել.

<http://www.avc-agbu.org>

ԱԲԱՂՄԻԱՑՈՒՄ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ ՀԵՌՈՒ

Ռ. ԿՈՐԻԻՆ

Գլենդէլեան երեկոյ, ինքնաշարժով փողոց ենք դուրս եկել հարազատի տուն գնալու տօնական շնորհաւորանքի առիթով: Մի քանի օր անձրեւներից յետոյ երկինքը պարզուել էր, վերեւում աստղեր էին ծիկրակում, զարմանալի է աստղերը հն վաղնջական գիշերների նման ջինջ չեն ցոլում, ծերացած աչքերի հետեւանք է, թէ նրանք մեզանից հեռացել են ապականիչ գազերից փախչելով, թէ գազերի մշուշապատ փառն է արգելք լինում նրանց պայծառ շտեմտելուն:

Գլենդէլի փողոցները լուսաւոր են, սիւների վրայ թառած ճրագները եւ շէնքերի շուրջը պարտադիր լոյսերն են լուսաւորում: Տակաւին գիշերն այնքան չի առաջացել, տների լոյսերը վառ են, տօնական օրեր են, գոյնգոյն շարիկներով ու լոյսերով գարգարանքներ են երեւում հաս ու կենտ շէնքերի ճակատների եւ ծառերի վրայ, որոշ սիգապատ շրջանակներում գետեղուած են արձանիկներ Բեթլեհէմեան Մսուրի Մեսիայի Սբ. Ծնունդը խորհրդանշելով, կաղանդ պապէն ֆուրգոնում երասանակները ձեռքում՝ նուէրներով բեռնաւորուած, ահա այսպէս նրանց երփներանգ լոյսերի շողարձակումը գիշերային գեղեցիկ տեսարան է պարզում մթութեան կուրծքը ձեղքելով:

Գլենդէլում մութի հետ նուազում են հետիոտն երթեկուծները, ընդհանրապէս քաղաքում բնակչութեան մեծամասնութիւնը սեփական ինքնաշարժեր է օգտագործում, մեքենան գոյգ կոշիկների է փոխարինել: Քաղաքի երթեկուծները թեթեւացել էր, սակաւ մեքենաներ էին երթեկուծ տարբեր նպատակներով, թերեւս ով գիտէ, որոշները մեր նման 2011 թուարեմուտի շնորհաւորանքի

էին դուրս եկել: Այցելութիւններ կարիք են, քանի որ նրանք սրտեր են ջերմացնում, բայց ցաւօք այդ շնորհաւորական այցելութիւններն եւս համեմատաբար պակաս են տնտեսական պատճառներով, հիմա գոհանում են հեռախօսային շնորհաւորանքներով:

Գլենդէլը մայրաքաղաք չէ, ոչ էլ գիւղաքաղաք, մայրաքաղաքի մէկ փոքրիկ տեսակն է իրեն յատուկ տաղանակներով, դժուարութիւններով եւ ուրախութիւններով: Գլենդէլը գիւղ է եղել, որը բարգաւաճել ու զարգացել է հարիւր տարուայ անցելով, հայերն եւս իրենց ակնառու ներդրումն ունեն: Շատեր նախընտրում են մայրաքաղաքում ապրել օգտուելու համար բազմատեսակ առաւելութիւններից, սակայն ես եւ ուրիշները մայրաքաղաք թեհւում կամ երեւանը թողած մի պուճուր քաղաքում՝ Գլենդէլում, ենք ապրում:

Ամանորից մի քանի օրեր էին անցնում, տօնական շնորհաւորանքի եւ բարի գալստեան նպատակով էինք գնում կնոջս հետ, մեզ եւս ուրախութեամբ միացել էր մեր հնգամեակ թոռնիկը, մենք էլ գոհ էինք նրա ներկայութիւնից, քանի որ մեր նիստ ու կացին է ծանօթանում, մեծերից է փոխանցում ազգային սովորութիւնները, սնունդը արմատից է դէպի ճիւղերը անցնում: Ըստ սովորութեան կարկանդակ թխուածքով էինք շնորհաւորանքի գնում: Տան շեմին մեզ դիմաւորեցին Գարեգինը հանդերձ Հայաստանից նոր ժամանած նրա Սաթենիկ կինը եւ երկու տղաները:

Գարեգինը եօթ տարիներ էր, որ ապրում էր Գլենդէլում հեռու իր կնոջից եւ զաւակներից, վերջապէս նա յաջողել էր ընտանիքին հայրենիքից բերել տալ օրինակաւորութեան համար դժուարութիւններ դիմակայելուց յետոյ: Այդ տարիների հեռաւորութեան ըն-

թացքում Սաթենիկը հաւատարմօրէն առանձինը հոգ էր տարել զաւակներին սպասելով ամուսնուն միանալու համբերութեամբ: Եօթ տարիների ընթացքում երկու փոքր տղաները հայրական շնչից հեռու դարձել էին երիտասարդներ իրենց պապայի բոլին համող՝ միջակից բարձր: Արդարեւ ամուսնի ինչ անկոտորում կամք եւ դիմացկանութիւն:

-Գարեգին, արդարեւ հեշտ չէ այսքան տարիներ համբերութեամբ սպասել կնոջ եւ զաւակներին, էս ինչ սիրոյ կապ է եղել ձեր մէջ:

-Հօպար ջան, բոլորն էլ այս հարցումն են ինձ ուղղում, ինչ ասեմ, էս էլ չեմ իմանում, միայն ասեմ որ սիրոյ անմար ատրուշան է բոյն դրել մեր մէջ, հաղորդակցական միջոցներով շարունակ ընտանիքիս հետ կապը պահել եմ ջերմ ու կենդանի, զգացումները ջինջ ու գորովալից, չեմ թողել նրանք խեղճ ապրեն նիւթապէս, սակայն ես զրկանքներով եմ ապրել այս տարիների ընթացքում եւ դիմացել ջերմասիրտ:

Արդարեւ նա ճշմարիտ էր, այդ տարիների ընթացքում խիստ աշխատանքի էր լծուած, անգամներ ճամբորդութիւն դէպի Սան Ֆրանսիսքօ կեցութեան օրինակաւորութիւնը հաստատելու համար, նաեւ անտրտունջ գումարների առաքում ընտանիքի համար: Նա ֆիզիքապէս նիհարած կազմուածք է ներկայացնում, դիմագիծը ծերութեան նշաններ արտայայտող, այտերը փոս ընկած ուռուցիկ այտուկներով, նիհար իրանին ներդաշնակ հայեացքը ցելաթոյր խիտ մազերով: Նա ծնողքի չորս զաւակների միակ կրտսեր տղան է, նա հինգ տարեկանում ծնողի հետ իրանից հայրենադարձում են: 1997-ին Չարենցաւանում հանդիպեցի նրան, ամուսնացած էր, Գրիգոր որդին եօթ, իսկ Գէորգը հինգ տարեկան: Նա Հայաստանում բարձրագոյնը աւարտած դարձել էր ճարտարագէտ, նախքան սովետի փլզումը Չարենցաւանի հասոցաշինութեան գործարանում էր աշխատում: Այդ

թուականին նա չէր աշխատում եւ նպատակադրել էր արտագաղթել, որի հետ հէնց էն օրերին խորհուրդ չէի տուել: Հայրն ու մայրն աւելի շուտ են արտագաղթում, հօր ուղարկած դուրսնելով ինք եւս անգամներ փորձում է Ամերիկա գալ, վերջապէս կնոջ եւ գոյգ տղաներին թողած Ամերիկա է գալիս այն յոյսով, որ շուտով ընտանիքին եւս բերել կը տայ, բայց նրա օրինականացումը հարցականի տակ է գնում եօթ տարիներ ձգձգուելով, մինչեւ կանաչ ճրագ է պարզում: Գնահատանքի խօսքս եմ ուղղում Գարեգինին:

-Բացառիկ հաւատարմութեան դէպքերից մէկը պէտք է համարել սա, որ ընտանեկան օջախը պահել էք անվթար:

Նրանք հաւատարիմ մեր սովորութեանց՝ մի բարձով ծերանաք, իմաստուն խօսքին հնազանդ դիմակայել են ամէն տեսակ դժուարութիւն եւ չեն թողել հայ ընտանիքը քայքայուի: Փոխադարձ սէրն ու գուրգուրանքը ընտանիքի գոյատեւման առհաւատչեան է: Հարցը այս դիտանկիւնից ինձ ուրախացնում է, որ ընտանիքը պահել են ամուր եւ հաստատուն, սակայն այն որ հայրենիքը լքել են՝ անընդունելի: Նրանց ամբողջի դէմքերին ժպիտն էր փայլում, բերկրանքով լի մէկ յարկի տակ բոլորուած, եօթ տարիների կարօտի քաղցր արտացոլանք: Հարցս եմ ուղղում Գրիգորին, որը երկու տարով մեծ է Գէորգից:

-Դու եւ եղբայրդ փոքր երեխաներ էք եղել, որ պապան ձեզ թողնելով Ամերիկա է եկել, առանց պապա այս երկար տարիների ընթացքում ինչ էիք անում:

-Պապային շատ էինք կարօտում, մեր կարօտը մեղմացում էր հեռախօսային կապերով, սակայն նրա բացը շատ զգալի էր, մաման իր վերաբերմունքով եւ հսկողութեամբ որոշ չափով փոխարինում էր նրան, այսինքն՝ թէ պապա էր եւ թէ մամա:

Շար.ը էջ 19

Vinyl Windows & Patio Doors

The LAST estimate you'll ever need!

Our Windows Qualify For the \$1500 Federal Tax Credit

D.W.P. REBATES

Payments as low as **\$45⁰⁰** per month!

SHOW ROOM located at 16735 Saticoy St. Van Nuys, Ca 91406

Holiday Specials

8 Premium Vinyl Windows Installed For \$2,995 *

12 MONTHS NO PAYMENTS NO INTEREST SAME AS CASH (OAC)

Our Success Depends on your Satisfaction

Serving Los Angeles, Ventura, Orange, And San Bernardino Counties

AmericanReliableWindows.com

American Reliable Windows Inc.

818 787-1101

Call Today!

Ask representative for details. Limited Time Offer

Licensed • Bonded • Insured
Ca Lic. #901591

ԻՐԱՆԱՐԱՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԱՇՅԱՂԵ ԵՒ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՅԵՏՔԵՐԸ

ՅՈՒՎԻԿ ՄԻՆԱՍԵԱՆ

Իրանի կրօնական քաղաքներից մեկն է Մաշհադը, որ կենտրոնն է խորասան Ռազալի նահանգի: Այդտեղ է նահատակուել իսլամ կրօնի շիա դաւանանքի ութերորդ էմամ Ռեզան եւ նրա դամբարանը գտնուում է այս քաղաքում: Այդ իսկ բերումով՝ ուխտատեղի է դարձել եւ քաղաքը մշտապէս լեցուն է ուխտաւորներով: Այս պարագան զգալիորէն մեծ նպաստ է բերում քաղաքի տնտեսապէս բարգաւաճման:

Քաշֆ գետն անցնում է նրանից 5 քմ. հեռաւորութեամբ: Այս գետը եւ իր ճիւղաւորումները կարեւոր դեր ունեն քաղաքի տնտեսութեան զարգացման մէջ:

Մաշհադը գտնուում է մի մեծ դաշտում: Ամենամօտ լեռը նրանից 4 քմ. հեռաւորութիւն ունի եւ կոչւում է Մարջուհի, որ մաս է կազմում Բինալուդ լեռնաշղթայի:

Արաբ աշխարհաշրջիկ էքնէ Բաթուկէն լուսնային հեջրի 8րդ դարում այցելելով Մաշհադ՝ այն գտել է փառաշուք ու մեծ քաղաք՝ բազմաթիւ շուկաներով ու շինութիւններով:

Քաղաքի առաջին էլեկտրակայանը հիմնուել է մաշհադաբնակ գործարանատէր Մելքոն Յարութիւնեանի միջոցով, որով առաջին անգամ լուսաւորուել է էմամ Ռեզալի ուխտատեղին:

Նրա բարձրութիւնը ծովի մակերեսից 970 մետր է եւ գտնուում է Թեհրանից 964 քմ. հեռաւորութեան վրայ:

Քաղաքի կլիման բարեխառն է, առաւելաբար՝ ցուրտ եւ չոր: Ամրանը նրա օդի ջերմաստիճանը հասնում է մինչեւ 35 աստիճան, իսկ ձմրանը՝ մինչեւ 15 աստիճան



Մաշհադի հայոց «Արիան» դպրոցը

զրոյից ցած: Տարեկան անձրեւի տեղման միջինը 260 միլիմետր է:

Ըստ 1996 թուականի մարդահամարի՝ ունի 1.887.405 հոգի բնակիչ, որոնցից 957.345 հոգին տղամարդ եւ 970.060 հոգին կին են, թուով 408.102 ընտանիք:

Տեղի բնակիչները պատկանում են արիա ցեղին, որին միախառնուել է նաեւ դեղին ցեղը: Խօսում են պարսկերէն՝ խորասանի, քրդական եւ թրքական բարբառներով:

Այս քաղաքի արդիւնաբերութիւններն են՝ ցորեն, գարի, իւղատու սերմեր, բանջարեղէններ, խնձոր, դեղձ, սալոր, արմտիք, սերկեւիլ, տանձ, կեռաս, խաղող, ծի-

րան, ընկոյզ, բալ, թութ, քրքում եւ ճակնդեղ:

Մաշհադի շրջակայ դաշտավայրերում ցանքսի ոռոգումը կատարում է գետի, քարիզների եւ խոր ու կիսախոր հորերի ջրերից օգտուելով, իսկ ըմպելի ջուրը հայթայթուում է մեծ թւով խոր հորերի միջոցով, որ գտուելուց յետոյ, միանում է քաղաքի ընդհանուր խողովական ցանցին: Էլեկտրահոսանքն ապահովում է Մաշհադի, Շարիաթի, Թուսի եւ Շիրուանի մեծ էլեկտրակայանների միջով:

Քաղաքի արտածումներն են՝ գորգ, կարպետ, մուշտակ, ձեռարուեստ, միրգ, չոր մրգեր, թամբաքու, քրքում, կոմպոտ, մրգանոյշ, ջրի ջեռուցման սարքեր, ինքնեռ, ճակնդեղ, տաւար եւ պաստորիզէ կաթնամթերք:

Մաշհադում կան բազմաթիւ հիւրանոցներ եւ շուկաներ:

Ինչ վերաբերում է Մաշհադի հայ համայնքին, նշենք, որ այն կազմուել է Երեւանից, Ազուլիսից, Վանից, Թբիլիսից, Աղբակից, Աշխաբադից, Շուշիից եւ Ղարաբաղի տարբեր շրջաններից եկած մեծ թուով հայ տարագիրներից: Հետագայում աշխատանքի բերումով՝ նրանց միացել են Իրանի տարբեր քաղաքներից, ինչպէս՝ Թաւրիզից, Ուրմիայից, Ղարաղաղից, Նոր Ջուղայից եւ Թեհրանից, հայ ընտանիքներ:

Մաշհադի հայ համայնքը աստիճանաբար կազմաւորուելով՝ թափ է ստանում ազգային կեանքը եւ մի շարք ազգանուէր բարերարների նիւթական օժանդակութեամբ կառուցում են ազգապատկան կենտրոններ՝ եկեղեցի, դպրոց, միութիւն եւ գերեզմանատուն:

Տեղի Ս. Աստուածածին եկե-



Մաշհադի հայոց գերեզմանատան Ս. Կատարինէ մատուռը

«Արարատ» կազմակերպութեան մասնաճիւղը՝ սկսեալ 1950-ական թուականներից, որ գոյատեւել է մինչեւ 1980-ական թուականների կէսերը, նաեւ աշխատել է կին օժանդակ միութիւնը:

Գալով գերեզմանատան՝ յայտնենք, որ Մաշհադի հայ համայնքը սկզբնական տարիներում ունեցել է մի գերեզմանատուն՝ ներկայի Դանեշ պողոտայում, որ քաղաքի տարածքի մաս կազմելով՝ քաղաքապետարանի կողմից վերածուել է զբօսայգու:

1930-ական թուականների վերջերը ժողովրդական օժանդակութիւններով համայնքն օժտուել է նոր գերեզմանով՝ Շէյխ Հոռ Ամելի պողոտայում, որ իր գոյութիւնը պահպանում է մինչ այժմ:

Գերեզմանատունը նախկինում ունեցել է 4595 քառ. մետր տարածք: Կից պողոտայի լայնացման հետեւանքով՝ այդ տարածքից առանձնացուել է 1719 քառ. մետր: Այժմ սոյն գերեզմանատան տարածքը կազմում է 2876 քառ. մետր, ուր գոյութիւն ունեն 230 շիրմաքարեր:

Այս գերեզմանատանը առաջին հողին յանձնուած անհատը եղել է Սաթենիկ Դաւթեանը՝ 1939 թուականին, իսկ վերջինը՝ Շուռա Մեհրաբեանը՝ 1995 թուականին:

Հին գերեզմանատանից փոխանցուած շիրմաքարերից ամենահինը կրում է 1915 թուականը եւ պատկանում է Շուշանիկ Մինասեանին:

Քանի որ սոյն գերեզմանատունը Մաշհադի միակ քրիստոնէական գերեզմանատունն է, ուստի՝ այլ ազգերի պատկանող քրիստոնէայ ննջեցեալները եւս ամփոփուել են այդտեղ, այդ ազգերի շարքում կարելի է նշել՝ ռուսների, լեհերի, ասորիների, ֆրանսացիների, ամերիկացիների եւ շուէյցարացիների:

Հարկ է նշել, որ վերջերս Մաշհադ կատարած այցելութեան ընթացքում ներկայ գտնուելով այս

գերեզմանատանը՝ այն գտայ ինամքով պահպանուած, մաքուր ու բարւոք վիճակում:

Նշենք նաեւ, որ թուականիս Սեպտեմբեր 17ին Թեհրանի հայոց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ Արք. Սարգսեանը Մաշհադ հովուական այցելութեան ընթացքում սոյն գերեզմանատանը կրօնական արարողութիւն է կատարել՝ այնտեղ հանդէպ ննջեցեալների հոգիների խաղաղութեան համար:

1986 թուականին գերեզմանատան տարածքում Հաւան ընտանիքի բարերարութեամբ, ի չիշատակ իրենց ծնողների՝ Պետրոս եւ Մարօ Հաւանների, կառուցուել է տեղի պահակի բնակարան, որ կից պողոտայի լայնացման հետեւանքով՝ մասնուել է կիսաքանդ վիճակի: Այժմ սոյն ընտանիքի նիւթական օժանդակութեամբ միեւնոյն տարածքում կառուցուել է պահակի կեցութեան համար մի նոր շինութիւն:

Յիշեալ գերեզմանատանը 1947 թուականին կառուցուել է մի մատուռ՝ Ս. Կատարինէ անուամբ, մաշհադաբնակ ազգայինների՝ Արփենիկ եւ Մելքոն Յարութիւնեանների բարերարութեամբ՝ ի չիշատակ առաջին մօր եւ երկրորդի գոքանչի՝ Կատարինէ Յակոբեան-Յովհաննիսեանի, որի շիրիմը գտնուում է սոյն մատուռի ներքնայարկում:

Մատուռն ունի 10 մետր երկարութիւն, 5 մետր լայնք, նրա բարձրութիւնը յատակից մինչեւ առաստաղը 7 մետր է: Ընդհանուր տարածքը կազմում է 50 քառ. մետր:

Սոյն մատուռը նախկինում օգտագործուում էր ննջեցեալների թաղման եկեղեցու կարգը կատարելու համար:

Համայնքի հայաթափ լինելու պատճառով՝ այժմ այն բանուկ չէ, քանի որ այդ գերեզմանատանը այլեւս թաղման արարողութիւններ չեն կատարուում:

Չեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շարաքաքերթիմ
T: (626) 797-7680 F: (626) 797-6863
massis2@earthlink.net

ՓՐՈՖ. ԳԵՈՐԳ ԽՐԼՈՊԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Շարունակուած էջ 6-էն

մուծիւն է: Նրանք եղել են, փայլել են, հասել են մեծութեան եւ յետոյ արդէն ծերացել են եւ սկսել են կամաց կամաց կորցնել իրենց ներուժը, պատմութեան իրենց առաքելութիւնը: Հին ազգերը մեծ մասամբ Ասիական ազգեր են, աւելի ձիւղը՝ Արեւելքի ազգեր: Նոր ազգերի պատմութիւնը նոր սկսեց: Նրանք հանդէս եկան 16-17րդ դարերուն եւ անոնց պատմութիւնը 3-400 տարուան պատմութիւն է: Հին ազգերը 4-5000 տարուան պատմութիւն են: Հետեւաբար մենք նկատի պէտք է ունենանք նաեւ այս տարբերութիւնը: Եթէ այս նոր ազգերը չկարողանան օգտուել պատմութեան դասերից, շատ շուտ նրանք կ'ենթարկուեն այն ճակատագրին որին ենթարկուեցին հին ազգերը: Նրանք էլ կամաց կամաց կը կորցնեն իրենց փայլը ինչպէս որ Հռոմը կորցրեց իր փայլը:

- Ուրեմն եթէ հզօր Գոթիկն այսօր Իտալիա մը մնաց, կամ Յունական մեծ քաղաքակրթութիւնն այսօրուան փոքր Յունաստանը, ուստի այդ իմաստով զարմանալի պէտք չէ՞ ըլլայ որ պատմական Յայաստանն մեզի մնացած է այսօրուան փոքրիկ Յայաստանը:

- Պատմականօրէն այդպէս պիտի կարողանանք մտնել: Թէեւ սա հաճելի չէ, բայց պատմական իրականութիւնը այդպէս է:

- Ընդունելով հանդերձ այս պատմական ընթացքը, թեւ հոն օրինակի համար բացառութիւն մը կը տեսնենք Չինաստանի պարագային. չեմ գիտեր եթէ անոնց թուաքանակն էր...

- Անոնք մեկուսացուեցին պատմութեան մէջ, մնացին իրենց իրենց մէջ եւ այդպիսով մի կողմից կորուցեցին համաշխարհային քաղաքակրթութիւնից (դրական եւ բացասական ազդեցութիւնների իմաստով), միւս կողմից իրենց աւանդականը կարողացան պահել եւ հիմա որ գործացան, այդ աւանդականը որպէս նորութիւն մէջտեղ սկսեցին դնել:

- Ես ալ ճիշտ հոն պիտի գայի: Երբոր մենք այդ հարուստ մշակոյթը ունինք, ի՞նչու համար չենք կրնար մենք ինքզինքնին վերանորոգել, առնելով այն ինչ որ մեզ գործացուցած էր ժամանակին եւ ատոնք գործադրութեան դնել այսօր:

- Եթէ մենք ունակ լինենք պատմութեան դասերից սովորելու եւ այդպէս ասած, մի տեսակի ողբերգական տեսակէտ չընդունել, աւելի կազմակերպչական մօտեցումներ ունենալ, այդ ժամանակ մենք կարող ենք այդ անել: Բայց մենք դեռ եւս այդ չունենք: Տեսէք. անցեալում մենք ունեցանք միացնող, ներշնչող ուժը՝ մեր պետականութիւնը: Յետագային այդ ուժը եղաւ եկեղեցին: Հիմա մենք երկուսն էլ չունենք: Մեր պետականութիւնը չունի այն ուժը որ ժամանակին ունեցաւ: Միեւնոյն ժամանակ մենք չունենք մեր եկեղեցիի կազմակերպչական, հոգեւոր թափ առած, վերանորոգիչ այն ուժը, որ հանդէս եկաւ 4րդ դարի սկիզբից եւ շատ մեծ հոսքով գնաց եւ համաշխարհային աւետարանչութեան մէջ վճռական դեր խաղաց իր շրջապատի մէջ, սկսեց փայլել կրօնական ներդրումներով: Հիմա մենք այդ սահմանափակել ենք եւ այլեւս այդ չունենք: Նոյնիսկ այսօր մեր կրօնական հաստատութիւնների մէջ հայ հայրաբանութիւնն չենք դասաւանդում: Մենք գիտենք եւրոպական հայրաբանութիւնը ինչ է,

բայց չգիտենք հայկականը: Մենք գիտենք եւրոպական քարոզարարութիւնը ինչ է, հայկական քարոզարարութիւնը, հոմեոլիները չգիտենք ինչ է: Մեր մեծ աստուածաբանները որ ունեցել ենք Միջնադարում, այսօրուան մեր հոգեւորականների ճնշող մեծամասնութիւնը դրանք չգիտեն: Ես մի փորձ կատարեցի: Գրիգոր Տաթևացու մի քանի քարոզները թարգմանեցի անգլերէն եւ անգլիախօս միջավայրում դրանք արտասանեցի մօտաւորապէս նոյն բովանդակութեամբ: Մարդիկ զարմացան թէ այս ինչ հրաշալի ուսմունք է, այս ինչ հրաշալի քարոզ է: Ասի բարեկամներ, սա մեր 14րդ դարի աստուածաբանն է, ես չեմ: Մենք չգիտենք այս բոլորը եւ սրանց վրայ ուշադրութիւն չենք դարձնում: Նոյնիսկ այսօր մենք վիճում ենք թէ վարդանանքը պատմական ի՞նչ խորք ունի, աստուածաբանական ի՞նչ խորք ունի: Նոյնիսկ հասանք այն մակարդակին, որ ժխտեցինք այդ բոլոր արժէքները: Մաշտոցեան արժէքներն էլ սկսեցինք ժխտել եւ սկսեց ի՞նչ: Օրինակ ես ներկայ եղայ մի հանդիսութեան, որտեղ ներկայ դասախօսը բացատրեց, որ Եղիշէն եւ Խորենացին ծայրից ծայր ստախօսներ են, փչել են, եւ այս հայ մշակոյթի արդի պաշտպաններն են: Եթէ այս ձեւով մենք մեզ ներշնչենք, այս ձեւով ղեկավարուենք, մենք երբէք չենք կարող վերակազմուել, մեր ազգային հունի վրայ բարձրանալ: Անկասկած ամէն մի պատմութեան մէջ եղել են թերութիւններ, ամէն երկրի պատմութեան մէջ եղել են ելեւէջներ, գրականութեան, պատմութեան մէջ եղել են կեղծիքներ, բայց այդ չի նշանակում որ դա պէտք է դարձնել հիմնականը եւ կարեւորագոյնը մոռանալ: Սա ընդհանուր մօտեցում է: Միեւնոյն ժամանակ պէտք չէ մոռանալ, որ օրինակ, հզօր Հռոմի միջով տապալեց: Հիւսիսի բարբարոսները: Հետեւաբար զարմանալի չէ, որ հզօր Բիւզանդիան էլ տապալուեց թուրք բարբարոսների կողմից, հայկական մշակոյթը ոտնակոխուեց այդ բարբարոսների կողմից: Մենք 10-11րդ դարերում Պարսկական, Իսլամական վերածնունդ ունէինք: Այդ բոլորը տապալուեցին Թրքական արշաւանքների ժամանակ: Հետեւաբար այդ բարբարոսական արշաւանքները իրենց մէջ ունեն որոշակի բաներ, որ ունակ են տապալելու այդպիսի քաղաքակրթութիւններ: Տեսէք, երբ Թրքական ցեղերը գալիս էին դէպի Պոլիս, հոն աստուածաբանները նստած վիճում էին թէ մեկ սանդի գլխին քանի հրեշտակ կարելի է նստել: Եթէ այս համեմատութեան մէջ լինի քաղաքակրթութիւնը, անկասկած դիմանալ չի կարող: Քաղաքակրթութիւնը շատ գործնական, բազմերես մի բան է, իր հոգեւոր, նիւթական, ռազմական եւ այլ կողմերով: Եթէ այս բոլորը հաւասարակշռուած չլինեն, այդ քաղաքակրթութեան կեանքը վտանգուած կը լինի: Խորենացին իր պատմութեան մէջ շատ հետաքրքիր մի միտք ունի: Ասում է, երբոր թագաւորութիւնը ուժեղ է, ուժեղ է նաեւ հաւատքը եւ եկեղեցին: Իսկ երբոր թուլանում է թագաւորութիւնը, թուլանում են պետութեան բոլոր լծակները: Այս հանգամանքը պետք է մոռանանք: Հիմա, եթէ թոյլ կը տաք, անցնենք բուն նիւթին:

(Շարունակելի)

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՓԱՐԱՄԱԶԻ ՀԵՏ

Շարունակուած էջ 13-էն

մասնաւորաբար ձիւղները եւ ինք ելաւ պատըշգամը, իր շուրջ ունենալով թուրք այցելուները: Երբ կարգը եկաւ զինուորներուն՝ ըսաւ. «Անդրանիկ, Անդրանիկ կ'ըսէք, բայց Անդրանիկը ոչինչ է առանց զինուորի»: Ապա, քաջալերական ու թելադրական խօսքերէ ետք, ներկայացուց թուրք մեծերը եւ ըսաւ. «Անոնք պիտի երթան Կովկաս, որպէսզի հայ եւ թուրք անհամաձայնութիւնները հարթեն»: Անոնց մեկնումով թրքութիւնը մնաց անզուլիս, եւ ասիկա ապահովեց Կարին գտնուող հայոց անվախ ապրելու հնարաւորութիւնը, առանց որուն անկասկած պիտի ջարդուէին:

Յաջորդ օրերը Անդրանիկ ջանաց Բաբելոնը կարգ ու կանոնի մտցնել: Սքանչելի հերոս զինուորականները տուններէ ներս Եւաներու հաճոյքին նուիրուած էին, եւ սակայն Անդրանիկ դիրքէ դիրք, բերդէ բերդ, մթերանոցէ մթերանոց վազեց ու ողբաց:

Կ'արժէր որ Խորենացի մը գտնուէր ու գրէր «Ողբ Ողբոց»: Աւելի քան 600 թնդանօթ պարունակող բերդաքաղաքը մէկ հատ

գործածելի թնդանօթ չունէր: Բայց կուսակցական ու քաղաքական շէֆեր շաբաթներէ ի վեր Կարին էին: Ո՛չ մէկ հաշիւ կար մթերանոցներու, գոյքերու: Բայց անկարգութիւնը հիանալի պատեհութիւն էր շատերուն՝ մեծ երեւնալու:

Նոյնիսկ խաղաղ օրերուն, Հերբիւլեան աշխատանք պէտք էր՝ այս գործին տակէն ելլելու: Բայց, Անդրանիկին առջեւ կար թրքական բանակին յառաջխաղացքն ալ: Անհրաժեշտ էր գոնէ ժամանակ մը կասեցնել այս սպառնալիքը:

Թրքական բանակը երբեք գծով կը յառաջանայ: Կեդրոնէն՝ Ըլճա գիւղէն, ձախէն՝ Թեքէ Տերեսիէն, աջէն՝ Առջեկ գիւղէն:

Անդրանիկ յոյս չունէր դաշնակցութենէն եւ ռուսահայերէն:

Ուստի աջը դրկեց իր ձիւղները՝ Սարգիս Արմաղանեանի հրամանատարութեամբ: Զախը՝ մեր յիսնեակը, զօր. Թորգոմի հրամանատարութեամբ: Իսկ կեդրոնը՝ ինք անձամբ գնաց: Մեր յիսնեակը զօր. Թորգոմի հետ ճամբայ ելլելու վրայ էր, երբ լուր տրուեցաւ թէ Պարսկաստանէն եկած երկու անգլիացի սպաներ կ'ուզեն մեզ լուսանկարել: Լուսանկարուեցանք ու մեկնեցանք:

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկաք զանոնք նուիրել Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝ հաճեցէք կապ պահել մեզի հետ: G.Y.O. 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104

ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ

PALM SPRINGS ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԳԼԱՅՈՂ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Փալմ Սփրինգս գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրուում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, թենիսի խաղադաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

Մանրամասների համար հեռաձայնել՝ (818) 246-0125

Վարձման գներն են՝	
Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝	\$ 400
Long Weekend-ների համար՝	\$ 500
Մէկ շաբաթուայ համար՝	\$ 675
Մէկ ամսուայ համար՝	\$ 1450

833 W. Glenoaks Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065



Dr. Missak Ekmekdjian
Chiropractor



Dr. Anahid Ekmekdjian
Chiropractor

Մեծածախանկերու եւ մանուկներու Բարոցորոշիչ բուժում: Գլխացու, վզի, մէջքի, յօզային եւ մկանային ցուրտ: Ինքնաշարժի վթարի նեւրալգիա պատահած դեպքերու բուժում:

Ձեր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է

ՓՐՕՖ. ԳԵՈՐԳ ԽՐԼՈՊԵԱՆԻ ԱՆԴԱՐՄԱՆԵԼԻ ԿՈՐՈՒՍՏԻ ՏԱՐԵԼԻՑԻՆ ԱՌԹԻ

Շարունակում է 1-ին

վկայականներու հասնելով: Ան կ'ուզէր խիզախել մասնագիտական նոր ոլորտներ, ասպարէզներ, գիտական նոր պաշարներ՝ որոնք պիտի գային կրկնակի արժեւորումներ ընծայելու մեր ազգային դարաւոր ժառանգութիւններուն, նաեւ պիտի օգնէին «հայ իմացական ու հոգեւոր արժէքները ծանօթացնելու, այլապէս տարածելու միջազգային ֆաղափարքական օտար սահմաններէ ներս:

Աւելին՝ իր հեռակայ նպատակն էր հասնիլ հոն, ուր պիտի կարենար ստեղծել հայ ընկերային եւ աստուածաբանական մտքի պատմութեան, Հայաստանի մէջ կիրառական ընկերաբանութեան հետազոտման եւ հայոց դէմ օսմանեան կայսրութեան կողմէ իրագործած ճեղասպանութեան մասնագիտական այլ գիտական ուսումնասիրութեան կեդրոններ, որոնք պիտի առաւելագոյնս սատար հանդիսանային մեր հայ մշակոյթի զարգացման եւ հայ ժողովուրդի՝ մինչեւ օրս ուրացուող պատմական իրաւունքներու նախաձեռնում:

Մասնաւորաբար, ճեղասպանութեան մասնագիտական ուսումնասիրութեան կեդրոնը պիտի գար նոր կարելիութիւններ ստեղծելու հայ ժողովուրդի տակաւ անիրաւուն ազգային դատին տալու հետազոտական նոր արեւելում: Նոր մօտեցում, որով կարելի պիտի դառնար գիտականօրէն ուսումնասիրել ճեղասպանութեան արդի էութիւնը, վեր առնելով անոր «աղբիւրագիտական, յուշագրական, պատմական, ֆաղափական, իրաւական, դիւանագիտական, ընկերային, մշակութային, հոգեբանական, կրօնական ու աստուածաբանական մօտեցումները»: Իր այս նոր մօտեցումով, Գեորգ Խրլոպեան կը հիմնէր գիտական նոր կանառ մը, գոր պիտի անուանէր «ճեղասպանագիտութիւն»:

Ան, ճեղասպանագիտութեան մասին իր գրած գրքին նախաբանի մէջ պիտի գրէր, թէ այս աշխատասիրութիւնը կը ձօնէր այն բոլոր մարդոց յիշատակին, «որոնք իրենց միտքը, հոգին, գործը, փրփուրը, արիւնը եւ պատգամները այնպէս խառնեցին հայ հողին, որ անբաժան դառնան հայ հողն ու հայ մարդը, որ յաւերժ խօսի հայ հողը»: Արդարեւ, Հայ հողին կանչը լոնցնելու եւ հայ մարդուն՝ «այդ կանչը լսելու եւ հասկնալու կարողականութեան սպառնացող ուրացողներէն գալիք վտանգը պիտի յաղթահարուէր արդի ճեղասպանագիտութեամբ», կը գրէ Խրլոպեան:

Խրլոպեանի ազգասիրութիւնն ու հայրենասիրութիւնը սահմաններ չունէին:

Ան միշտ իր ժողովուրդի ու հայրենիքի կողմէն գտնուեցաւ իր բեւ անսակարկ եւ ֆաջ պաշտպան: Ան, իր սուր քննադատութիւններուն ենթակայ դարձուց հայրենի իշխանութիւններու յոռի այն բոլոր փառքերը, որոնք կը վտանգէին հայուն եւ երկրին ապահովութիւնն ու գոյութիւնը, իր իսկ հայրենիքէն ներս: Ան խստօրէն ձաղկեց սահ-

մանադրական կեանքի եւ օրէնքի գործադրութեան մէջ իշխանաւորներուն ցոյց տուած ապիկարութիւնները, չարաշահութիւնները, գիտակցաբար այլ ընյատակեայ կատարած բռնաբարութիւնները, ֆիզիքական չէզոքացումներն եւ անօրինական այլ եղբարական տնօրինումները:

Խորապէս ազգասէր եւ հայրենասէր Խրլոպեան նուիրեալը, կը գտնէր, թէ Հայաստանի մէջ պէտք էր կերտուէր «ինքնատիպ վերածնունդ»: Պէտք էր վերականգնել դարերու ընթացքին մշակուած հայ առաջաւոր անդրոյթները: Պէտք էր հայ կեանքէն անէացնել չարը, մոլախոտը, մակարոյծ օտարամուտ տարրերը:

Ան, իր խիստ քննադատութիւններուն թիրախ դարձնելով Քոչարեան-Սարգիսեան տասնամեայ հայրենիք կորուստի առաջնորդող միացեալ ղեկավարութիւնը՝ կը գտնէր, թէ երկիրը առաջնորդելու համար «անհրաժեշտ էր ղեկավարուել իմանալ»: Բայց նորաբուն ղեկավարութիւնը նախընտրեց ենթարկուիլ այն սկզբունքին, որ կը պատգամէր. «Իմ կամքը, իմ ցանկութիւնը օրէնք է»: Դեկավարութիւն մը, որ դարձաւ «մաքիավելական դպրոցի ներկայացուցիչ, խարդաւանքների վարպետ, երկդիմի, ցինիկ, իրենց պարապ գրպանը լեցնող անօրէն իշխանաւորներ» (Տես՝ «Բազմախնդիր Նախագահական Ընտրութիւն», «Մասիս» Փետրուար 9, 2008):

Արդարեւ, Գեորգ Խրլոպեան եղաւ փնտռուած, տաղանդաւոր գրող մը: Խորաբափանց ընկերաբան մը, պատմաբան մը, փիլիսոփայ մը: Կլանող դասախօս մը, ուսումնական մարզի մէջ նորաբար մանկավարժ մը, հայ ընկերային եւ աստուածաբանական մտքի պատմութեան հետազոտման մէջ անգուգական գիտաշխատող մը, եւ վերջապէս հայ ժողովուրդի դէմ իրագործուած ճեղասպանութեան նախաձեռնող, դատապարտութեան մէջ առաքեալ մը: Ժողովուրդը գնահատեց իր նուիրումը, զինքն արժանացնելով բազմաթիւ պարգեւատրումներու, նշելու համար մի քանի, յայտնեմք. Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ շխառնը, Երեւանի Համալսարանի արծաթեայ կրծքանշանը եւ Վենետիկի Միսիոնարական Միաբանութեան Միսիոնար Սերաստացի կրծքանշանը: Տօֆ. Փրոֆ. Գեորգ Խրլոպեան, իր բարձրորակ մեկնագրութիւններով («Անանիա Միրակցիի Աշխարհայեացքը», «Գրիգոր Նարեկացիի Մարդասիրութիւնը», «Ընկերային եւ Հոգեբանական Խնդիրներ Համալսարանական Ուսուցման մէջ», «Ուսումնական Այժմէական Պատկերացումներ» եւ այլն աշխատասիրութիւններով եւ իր հայագիտական եւ կրօնական բնոյթի աւելի քան 20 պարբերագրերով եւ 200 հետազոտական աշխատութիւններով, մեծ ներդրում ունեցաւ հայ մշակոյթի անդաստանէն ներս:

Գեորգ ջան, հանգիստ՝ յոգնատանջ ոսկորներուդ, թիր յարգանք՝ վաստակիդ եւ յիշատակդ վառ՝ քանկագի՛ն գրչեղբայր:

ԳՕՍԹԱ ՄԵՍԱՅԻ Ս. ԱՍՏՈՒԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ

Շարունակում է 7-էն

միեւնոյն ատեն մարգական խաղեր կազմակերպելով անոնց համար, Զուարթնոց Մանկանց Երգչախումբ-Պարախումբ անոնց սորվեցնելու մեր Ս. Պատարագը եւ շարականները եւ հայ ֆօլքլորիկ պարերը: Նաեւ կազմուեցաւ Մշակութային Յանձնախումբ կազմակերպելու համար մշակութային ձեռնարկներ եւ հայ գիրքի հանդէսներ: Ընկերային Յանձնախումբ կազմուեցաւ, որ սկզբնական տա-

գնել այլ կալուածներ եւս, ապագային:

Այլ ծրագրեր եւս մշակուեցան, օրէ օր ուռձացող համայնքի կարիքները հոգալու: Կազմուեցաւ Մայրեր ու Երեխաներ, ինչպէս նաեւ Տէր եւ Տիկ. Զոյգերու խումբերը: Առաջինը եկեղեցիի հովանիին տակ ի մի կը հաւաքէ երիտասարդ մայրեր իրենց երեխաներով, մինչ երկրորդը՝ երիտասարդ զոյգերու համար կը կազմակերպէ, քրիստոնեայ միջավայրի մէջ, ընկերային եւ զաղութային



Ամենայն Հայոց Հայրապետ Տ. Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսի պատմական այցը Յունիս 2, 2005

րիներուն հայեր քով քովի հաւաքեց հայկական միջնորդի մէջ հաճելի ժամանց տալով անոնց եւ միեւնոյն ատեն գումարներ հանգանակեց նոր հիմնուած եկեղեցիին օգնելու նպատակաւ:

Եկեղեցուց Երգչախումբը բաւական կազմուած ըլլալով, մկրտուեցաւ Յովսէփեան Դպրոց Դաս Երգչախումբ, ի յարգանք հիմնադիր Առաջնորդ գեր. Տ. Վաչէ Արք. Յովսէփեանի: 1997ին, զանգակատուն մը բարձրացաւ, որ եկեղեցիին տուաւ հայկական ոճ եւ տեսք: 2000ին Հիմնադրամի Յանձնախումբ մը կազմուեցաւ Ծխական Անդամական Ժողովին համարատու, որուն գլխաւոր պատասխանատու թիւնն է հիմնադրամներ ապահովել, Ս. Աստուածածին Եկեղեցուց ապագայի նիւթական ապահովութեան համար:

Այս մարմինը, համագործակցութեամբ Ծխական Խորհուրդին, եկեղեցուց ապագայի ընդարձակման համար ուսումնասիրութիւններ կատարեց գլխաւորութեամբ համաշխարհային համբաւի տիրացած ճարտարապետ Պրն. Արամ Պասէնեանի: Ան իր կամաւոր ծառայութեամբ եւ ուսումնասիրութեամբ ճամբայ հարթեց եւ ցուցմունքներ ըրաւ եկեղեցուց կից կալուածներ գնելու, որպէսզի կարելի ըլլան ապագայի ընդարձակման ծրագրերը: Պրն. Պասէնեանի ծրագրերը մշակուածն մղուած, Ծխական Խորհուրդն ու Հիմնադրամի Յանձնախումբը, հաւանութեամբ Ծխական Անդամական Ժողովին ու Թեմական Խորհուրդին, գնեց նախ եկեղեցուց կից 6 յարկաբաժիննոց շէնքը եւ ապա բնակարան մը, ընդարձակման ծրագրերը մեծ յոյսերով իրականացնելու համար, երբ ծուխը կարենայ

ձեռնարկներ:

Թեմիս ներկայ կորովի Առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի ընտրութիւնը նոր հոգեւոր զարթոնք մը բերաւ Արեւմտեան Թեմի ծուխերէն ներս: Նախ, նոր Մայր Տաճարի շինարարութիւնը եւ Ամենայն Հայոց Հայրապետ Տ. Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսի ձեռնամբ պատմական օժուած անցնող տարուոյս Սեպտեմբերին, ամբողջ Թեմի կեանքը նոր հունի մէջ դրաւ: Եկեղեցուց մէջ մասնաւոր ուշադրութիւն կը կեդրոնացուի երիտասարդ սերունդին, որպէսզի անոնք միանան երգչախումբերուն եւ ծառայեն Ս. Խորանին, իբր դպիր եւ սարկաւազ: Շատ մը դպիրներ, ուրարակիրներ եւ սարկաւազներ կանոնաւոր կերպով կը ծառայեն ամէն Կիրակի եւ երիտասարդ-երիտասարդուհիներ կ'երգեն երգչախումբին մէջ, մասնաւոր հանդիսաւոր օրերուն:

Ս. Աստուածածին Հայց. Եկեղեցուց պատմութիւնը հարուստ է եւ այս կարճ պատմականը արդարօրէն չի ներկայացնէր 25 տարուայ ծուխին կեանքը: Անթիւ եւ անհամար է թիւը ծխականներուն եւ հաւատացեալներուն, որոնց մէկ մասը առյաւէտ բաժնուած են մեզմէ, որոնք նուիրեցին իրենց տաղանդը, ժամանակը եւ նիւթականը, հիմնելու, կառուցանելու եւ կազմակերպելու մեր եկեղեցին:

Մեր անկեղծ գնահատանքը եւ երախտագիտութիւնը բոլորին՝ լաւ աշխատանքին համար: Բոլորս ալ սա պահուս հարուստ կը զգանք մեր փորձառութեամբ եւ կեանքով շնորհիւ Ս. Աստուածածին եկեղեցիին եւ մեր ցկեանս կապին, գոր կերտեցինք իրարու հետ:

Ամփոփեց՝
Դոկտ. Վահրամ Պիրիճիք



LET'S PUT PASADENA FIRST

C KHATCHIK "CHRIS"
CHAHINIAN

FOR CITY COUNCIL

Հայ գաղութին
Հայ գաղութին
համար

WWW.CHAHINIANFORCITYCOUNCIL.COM

Խաչիկ «Քրիս» Շահինեան եղած է Փասադինայի բնակիչ աւելի քան 20 տարիներ: Փոքր գործառքի սեփականատէր է, համայնքի ծանօթ անձնաւորութիւններէն եւ ընտանիքի հայր: Խաչիկ եւ իր կինը՝ Ռիթան, ունին երեք զաւակներ՝ բոլորն ալ յաճախած են Փասադինայի հանրային վարժարանները:

Համայնքային ծառայութիւններուն մաս կը կազմեն հետեւեալները.

- 2007էն ի վեր վարչութեան անդամ՝ 4րդ Շրջանի, Փասադինայի Համայնքի Ներթափանցման Սիւրբան (Pasadena Community Access Corporation):

- Հիմնադիր՝ «Հայ Ինքնութեան Հունձք»ի (Armenian Identity Harvest):

- Համայնքին ծանօթ, 2010ի ԱՄՆ Մարդահամարին օժանդակից:

- AYSOի կամաւոր մարզիչ:

- Put Pasadena First Խաչիկ Շահինեան գորակից կը կանգնի փոքր գործառքներու:

- Վարժարաններու Բարձր Որակե Գլխաւոր Նախադասութիւն է

- Թարերու Մաքրութիւն Եւ Երօտեւորեան Կանխարորոտիւն Առաջնագրութեան Եւ

Օգտուելով ղեկավարման փորձառութենէն, Շահինեան կը ցանկայ մեր համայնքին մէջ այս կարեւոր նպատակներուն հասնիլ: Կը խնդրուի Փասադինայի մասին ձեր հոգերն ու հարցերը կիսել Խաչիկ Շահինեանի հետ, հեռաձայնելով անոր՝ (626) 399-1799 թիւին, կամ՝ գրել հետեւեալ եմակին (ելեկտրոնային նամակ) chahinianforcitycouncil@gmail.com

Միա՛կ Հայ թնկնածուն, որ կը վայելէ Հայ համայնքին աջակցութիւնը

Փասադինայի Հայ Գաղութային Երեսօրէն

Քուէարկեցէք Խաչիկ «Քրիս» Շահինեանին Մարտ 8ին

Չէր քուէն՝ ձեր ձայնն է



Զօրէն՝ Ստառ, Խաչիկ «Քրիս», Լարա, Ռիթա, Սեակ

